

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Ռաֆայել Վարդանյան, Արմեն Շուքուրյան

Համեմատական իրավագիտության ծագումն ու զարգացումը (պատմական զարգացման հիմնական ուղենիշները)3

Аделина Саргсян

Качественное обновление юридического образования в условиях цифровой трансформации общественных отношений..... 13

Арсен Кахкцян

Источники военного права Республики Армения..... 24

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CIVIL LAW/ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Կարեն Մելիքսեթյան

Գործադիր մարմինը՝ որպես կորպորացիայի ընթացիկ ղեկավարումն իրականացնող մարմին33

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

Գոհար Ավագյան

Ապահովման ինստիտուտի առանձնահատկությունները վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերով..... 43

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Гайк Григорян

Проблемы ответственности военно-политического руководства Азербайджана за геноцид армянского населения Нагорного Карабаха..... 54

Մելիք Մելիքյան

Հանցագործության պրովոկացիայի օբյեկտիվ հատկանիշները69

Գևորգ Իսրայելյան

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների առարկայի տեսակները և առանձնահատկությունները 76

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/ УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Varazdat Sukiasyan

Dialogue Between the Strasbourg Court and National Courts (Criminal Limb)..... 84

Ованес Баяндурян

Уголовно-процессуальное положение юридического лица в Республике Армения93

Կարապետ Սմբատյան
Միջնորդությունները ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում 105

**ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/PENITENTIARY LAW/
УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНОЕ ПРАВО**

Արփի Լազարյան
Անչափահաս դատապարտյալների հետ վարվեցողության միջազգային չափորոշիչները և դրանց կիրառման որոշ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 114

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/
МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**

Գոռ Հովհաննիսյան
Եվրոպական իրավունք (մաս III) – հիմնական իրավունքների խարտիայի հիմնական իրավունքները 123

Րոզա Ամիրова
Международные санкции в сфере банковских услуг по переводам денежных средств как форс-мажорное обстоятельство 135

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներ 144

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/
ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

<https://doi.org/10.59546/18290744-2023.4-9-3>

ՌԱՖԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու
ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

RAFAYEL VARDANYAN
Candidate of Law
ARMEN SHUKURYAN
*Senior researcher at the Institute of Philosophy,
Sociology and Law of the NAS of the RA,
Candidate of Law*

РАФАЭЛЬ ВАРДАНЯН
кандидат юридических наук
АРМЕН ШУКУРИИ
*старший научный сотрудник института философии,
социологии и права НАН РА,
кандидат юридических наук*

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
(ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ)**

**ORIGIN AND DEVELOPMENT OF COMPARATIVE JURISPRUDENCE
(MAIN LANDMARKS OF HISTORICAL DEVELOPMENT)**

**ЗАРОЖДЕНИЕ И РАЗВИТИЕ СРАВНИТЕЛЬНОЙ ЮРИСПРУДЕНЦИИ
(ОСНОВНЫЕ ВЕХИ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ)**

Ներածություն

1. Համեմատական իրավագիտության գաղափարի ծագումն ու զարգացումը հին աշխարհում: 2. Համեմատական իրավագիտության հայացքների զարգացումը Միջին դարերում: 3.

XIX դարի համեմատական իրավագիտության ընդհանուր բնութագիրը: 4. Համեմատական իրավագիտության պատմափիլիսոփայական ուղղությունը Գերմանիայում: 5. Համեմատական իրավագիտության ֆրանսիական դպրոցը: 6. Համեմատական իրավագիտության զարգացումն Անգլիայում և ԱՄՆ-ում: 7. Համեմատական իրավագիտությունը Ռուսաստանում: 8. Համեմատական իրավագիտությունը XX դարի առաջին կեսին: 9. Համեմատական իրավագիտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում: 10. Համեմատական իրավագիտությունը և միջազգային գիտական համագործակցությունը:

Հիմնական հետազոտություն

Համեմատական իրավագիտության զարգացման խնդրում նշանակալի դեր են խաղացել նաև Վերածննդի և Լուսավորության դարաշրջանի ներկայացուցիչները:

Ըստ ֆրանսիացի մասնագետների՝ համեմատական իրավագիտությունը սկսվում է Շ. Մոնդեսքյոյի «Օրենքների ոգու» աշխատությամբ¹:

Անգլիացիները գտնում են, որ համեմատական իրավագիտության հիմքը դրել է Ֆրենսիս Բեկոնը, որը լայնորեն օգտագործել է իր կողմից մշակված համեմատական մեթոդաբանությունը²:

Գերմանացիների կարծիքով՝ առաջինը Լեյբնիցն է առաջ քաշել տարբեր իրավական համակարգերի համեմատական հետազոտության անհրաժեշտությունը:

Համեմատական իրավագիտությունը երկարատև և հակասական պատմություն ունի: Ֆրանսիացի հայտնի իրավաբան Ռենե Դավիթի կարծիքով՝ համեմատական իրավագիտությունն այնքան հին է, որքան պետությունը և իրավունքը³:

Պատմական փաստերը վկայում են, որ համեմատական իրավագիտության սաղմերը ձևավորվել են Հին Արևելքի, Հին Աթենքի և Հռոմի ստրկատիրական պետություններում: Այսպես, օրինակ, համեմատական իրավագիտության որոշակի գաղափարներ է բովանդակում Հին Չինաստանի (IV ք. թ. ա) հասարակական քաղաքական մտքի հուշարձաններից մեկում⁴, որտեղ խոսվում է տարբեր երկրների կարգերի մասին և դատողություններ է արվում, թե ինչպիսի օրենքներ պետք է լինեն տարբեր երկրներում: Այն երկրներում, - նշում է հեղինակը, - որտեղ խելաթյուրվում է օրենքը, խախտվում է նաև կարգը, և երկրում տիրում է անկարգությունը:

Համեմատական իրավագիտության գաղափարները Հին աշխարհում առավել ցայտուն են դրսևորվել Հին Աթենքի փիլիսոփաների և Հին Հռոմի իրավաբանների աշխատություններում: Արևմտյան գիտնականների կարծիքով՝ հենց այստեղ են առաջին անգամ ձևավորվել ոչ միայն համեմատական-իրավական գաղափարները, այլև գործնականում առաջին անգամ է փորձ արվել համեմատական հետազոտության ենթարկել պետությունը և իրավունքը: Այսպես, մեզ հասած մի շարք իրավական հուշարձաններ (օրինակ՝ XII տախտակների օրենքը 451-450թթ. ք. թ. ա.) արդյունք են համեմատական-իրավական գաղափարների: Արևմուտքի հետազոտողների կարծիքով՝ Հռոմում XII աղյուսակների օրենքները կազմվել են հունական իրավունքի ուղղակի ազդեցության շնորհիվ, որոնց հիմքում ընկած են Սոլոնի օրենքների դրույթները: Հունական իրավունքի և իրավական մտքի ազդեցությունը հռոմեական իրավուն-

¹ Տե՛ս *Марченко М. Н.*, Сравнительное правоведение. Общая часть, М., Зерцало, 200 с., с. 42:

² Մանրամասն տե՛ս *Романов А. К.*, Правовая система Англии. М., 2000:

³ Տե՛ս *Давид Р.*, Основные правовые системы современности / Сравнительное право, М., 1967, էջ 25-26):

⁴ Տե՛ս Книга правителя области Шан (Шан Дзюнь Шу.) М., 1993, էջ 212-213):

քի վրա նկատվում է նաև Գայոսի «Ինստիտուցիաներում»: Վերջինս ծառայել է որպես դասագիրք հռոմեական իրավունքի ուսումնասիրման համար: Հռոմեական իրավաբաններն օգտագործում էին նաև կայսրության այլ ժողովուրդների իրավական զարգացման արդյունքները: Դրանցից ամենից հաջողված իրավական ինստիտուտները խորը և համակողմանի ուսումնասիրությունից ու իմաստավորումից հետո, ձևափոխվում և հարմարեցվում էին հռոմեական իրականության պահանջներին: Այդպիսի շատ ինստիտուտներ այնքան էին վերափոխվում ու լրացվում հռոմեական իրավաբանների ջանքերով, որ ակնհայտորեն կորցնում էին իրենց ինչպես սկզբնական ձևը, այնպես էլ բովանդակությունը: Արդյունքում դրանք հաճախ ներկայացվում էին որպես հռոմեական հեղինակների ստեղծագործություն: Այսօրվա ուսումնասիրողը կարող է հայտնաբերել այդ փոխառումը միայն այն պարագայում. եթե տիրապետում է հին հռոմեական իրավունքի աղբյուրների և կայսրության տարբեր մասերում ապրած ժողովուրդների իրավական հուշարձանների բազմակողմանի իմացությանը:

Համեմատական իրավագիտության գաղափարները արժարժվել են նաև անտիկ դարաշրջանի փիլիսոփաների մի շարք աշխատություններում, մասնավորապես՝ Պլատոնի «Օրենքներ»-ում և Արիստոտելի «Պոլիտիկա»-ում: Պլատոնը, համեմատելով հունական քաղաք-պետությունների (պոլիսների) օրենքները, դրանց արդյունքների հիման վրա հետևություններ է արել իդեալական պետության կառուցվածքի վերաբերյալ, որտեղ, ըստ նրա, գործում են դիտարկված օրենքներից առավել համապատասխանողները: Օրենքների համեմատական-իրավական վերլուծության շնորհիվ՝ Պլատոնը հետևություն է անում, ըստ որի՝ կործանման է ենթակա այն պետությունը, որտեղ օրենքն ուժ չունի և գտնվում է որևէ մեկի իշխանության ներքո: Պետության փրկությունը Պլատոնը տեսնում է այնտեղ, որտեղ երկիրը կառավարում են օրենքները: Համեմատական-իրավական հսկայական նյութի հիման վրա է գրվել Արիստոտելի «Պոլիտիկա» նշանավոր աշխատությունը: Հետազոտողների վկայությամբ այդ աշխատանքում օգտագործվել է հունական 158 և բարբարոս քաղաք-պետությունների սահմանադրական օրենսդրությունը: Համեմատական-իրավական մեթոդի շնորհիվ՝ Արիստոտելը հետևություններ է անում կառավարման լավագույն ձևի, լավ օրենքների ու բարքերի մասին⁵:

Միջին դարերում համեմատական իրավագիտության գաղափարները որոշակի զարգացում ունեցան հռոմեական իրավունքի փոխառման (ռեցեպցիայի), կանոնական իրավունքի ձևավորման և համակարգման, ինչպես նաև ազգային իրավական համակարգերի (հիմնականում) սովորութային իրավունքի հենքի վրա:

Հռոմեական իրավունքի ռեցեպցիան հսկայական նշանակություն ունեցավ մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգի ձևավորման գործում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է առավել խորությամբ և մանրամասն դիտարկել այդ պատմական երևույթը:

Ամենաընդհանուր գծերով ռեցեպցիան կարող է բնութագրվել որպես որևէ պետության կողմից մեկ այլ պետության ավելի զարգացած իրավունքի և իրավական համակարգի ընդօրինակում (փոխառում): Իսկ հռոմեական մասնավոր իրավունքի ռեցեպցիան կարելի է բնութագրել որպես հետագա քաղաքակրթությունների զարգացման ընթացքում նրա հիմնական սկզբունքների և դրույթների, ինչպես նաև հռոմեական իրավունքի հոգու ընկալում և վերածնունդ:

Հռոմեական իրավունքի ռեցեպցիան ոչ թե առանձնակի, միանվագ իրադարձություն էր, այլ բարդ և բազմաստիճան գործընթաց: Ռեցեպցիայի առաջին քայլերն էին 11-րդ և 12-րդ դա-

⁵ Shtu *Нерсесянц В. С.*, История политических и правовых учений, М., 2014:

րերում Իտալիայի քաղաքների և Եվրոպական այլ երկրների համալսարաններում հռոմեական իրավունքի ուսումնասիրությունները:

Ընդհանրապես իրավունքի ընդօրինակումը հասարակության իրավական պահանջ-մունքների արդյունք է: Այն կարևոր գործոն և խթանիչ է ազգային ինքնավար իրավական համակարգերի զարգացման համար:

Մասնավորապես, հռոմեական իրավունքի ընդօրինակումը կատարվել է տարբեր եղա-նակներով ու ձևերով: Մասնագիտական գրականությունում նշվում է հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հետևյալ ձևերը.

1. կրթական հաստատություններում հռոմեական իրավունքի ուսումնասիրում՝ որպես հանրակրթական իրավաբանական առարկա,

2. հռոմեական իրավունքի՝ որպես մշակութային արժեքի ուսումնասիրում,

3. հռոմեական մասնավոր իրավունքի նորմերի և դրույթների ուղղակի կիրառումը,

4. հռոմեական մասնավոր և հանրային իրավունքի հիմնարար դրույթների, սկզբունքնե-րի, գաղափարների և կատեգորիաների յուրացում ու օգտագործում:

Հռոմեական իրավունքի ընդօրինակման դասական օրինակներ են համարվում Ֆրանսիա-կան քաղաքացիական օրենսգիրքը (1804 թ.) և գերմանական քաղաքացիական օրենսգիրքը (1896 թ.): Նշված օրենսգրքերը զգալի ազդեցություն ունեցան բազմաթիվ երկրների քաղա-քացիական օրենսգրքերի մշակման և ընդունման համար: Հռոմեական իրավունքը անուղղա-կի եղանակով՝ հունարյուզանդական իրավունքի միջոցով, որոշակի ազդեցություն է ունեցել նաև հայ իրավունքի վրա:

Միջին դարերում Եվրոպայում համեմատական-իրավաբանության զարգացման ոլորտում քրիստոմատիկ աշխատանք էր համարվում անգլիացի իրավաբան-կոմպարատիվիստ Ֆոր-տեսքյուի (XVդ.) երկերը՝ «Անգլիայի կառավարումը» և «Անգլիական օրենքների գովքը»: Այդ աշխատություններում հեղինակն առաջին անգամ համեմատական վերլուծության է ենթարկել Անգլիայի և Ֆրանսիայի օրենքներն ու գերապատվությունը տվել է անգլիական օրենքներին, գտնելով, որ այդ օրենքներն առավել են համապատասխանում հասարակության իրավական պահանջունքներին:

XV-XVI դդ. Անգլիայի իրավական համակարգերը և ինստիտուտները համեմատական վեր-լուծության է ենթարկվել նաև այլ հեղինակների աշխատություններում, մասնավորապես՝ Հ. Գերմեյնի «Դոկտոր և ուսանող» աշխատանքում:

Համեմատական-իրավական հետազոտությունները շարունակվեցին ողջ միջնադարում, ընդհուպ մինչև նոր ժամանակները, երբ միմյանց հաջորդեցին Մոնտեսքյուն, Հուգո Գրոցիո-սը, Պուֆենդորֆը և այլք:

Նոր և նորագույն ժամանակաշրջանում համեմատական-իրավական հետազոտություն-ները ոչ միայն ծավալային տեսանկյունից բազմապատկվեցին, այլև համակարգված բնույթ ստացավ և աստիճանաբար ձևավորվեց որպես ինքնուրույն իրավաբանական գիտություն:

Այդ գործընթացները հիմնականում զարգացան Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիա-յում և ԱՄՆ-ում⁶: Համեմատական իրավագիտությունը զարգացավ նախահեղափոխական Ռուսաստանում և մասամբ նաև Խորհրդային Միությունում:

Գերմանիայում համեմատական իրավագիտությունը սկզբնապես ձևավորվեց որպես հա-մեմատական-պատմական մեթոդ կամ գիտության: Այդ ժամանակվա համեմատական իրա-վագիտության առումով հասկացվում էր իրավունքի պատմության համեմատական ուսումնա-

⁶ Տե՛ս Шумилов В. М., Правовая система США, М., 2006:

սիրություն: Այդպիսի ուղղության համար հիմք էր ծառայում իրավունքի պատմական դպրոցը, որը լայնորեն կիրառում էր տարբեր ազգային համակարգերի համադրումը: Իրավունքի պատմական դպրոցի հիմնադիր Սավինյինը փորձեց սետղծել իրավունքի գիտական պատմությունը:

Սավինյին իր «Մեր ժամանակի առաքելությունն օրենսդրության և իրավագիտության վերաբերյալ» գրքով կոմ նշում է, որ ժողովրդի բնավորությանը և ոգուն, կեցությանը և վիճակին համապատասխան իրավունքը նախ ստեղծվում է նրա բարքերով ու հավատալիքներով, և հետո միայն իրավագիտությամբ ոչ թե օրենսդրի կամայանականության, այլ ժողովրդական կյանքի անտեսանելիորեն գործող ներքին ուժերով: Այդ իսկ պատճառով, ըստ նրա, յուրաքանչյուր ժողովրդի իրավունքը նրա **բնավորության և ոգու արտահայտությունն է**: Հետագայում իրավունքի պատմական դպրոցի շրջանակում զարգացավ **համեմատական-ազգագրական իրավագիտությունը**, որը կապված է ճանաչված գիտնականներ Պուխտայի և Կոհլերտի հետ: Վերջինս համեմատական իրավագիտության շրջանակում ուսումնասիրել է նաև հայոց հին իրավունքը:

Գերմանիայի մեկ այլ գիտնական Հանսը խստորեն քննադատելով իրավունքի պատմական դպրոցի խոցելի տեղերը առաջ քաշեց իր համեմատական-փիլիսոփայական պատմական ծրագիրը: Դրա հաստատումն է վկայում նրա քառահատոր հետազոտությունը՝ «Ժառանգման իրավունքը համաշխարհային-պատմական զարգացման մեջ»: Այդ աշխատությունում հեղինակը համակողմանի համեմատական-վերլուծության է ենթարկել տարբեր ժողովուրդների՝ հռոմեացիների, հինդուանների, չինացիների, հրեաների, մահմեդականների և հույների, ինչպես նաև նոր ժամանակների ազգերի՝ իտալացիների, պորթուգալացիների, ֆրանսիացիների, անգլիացիների և հյուսիսամերիկյան ժողովուրդների ժառանգման և ընտանեկան իրավունքը: Այս աշխատությունը իր ծավալով առաջին խոշոր ներդրումն է իրավունքի պատմության համեմատական հետազոտության բնագավառում: Գիտնականներից ոմանք այդ աշխատության հետ են կապում արդի համեմատական իրավագիտության սկզբնավորումը:

Համեմատական իրավագիտության գերմանական դպրոցի խոշոր ներկայացուցիչներ են Կ. Յախարիան, Յ. Միտտերմայերը և Ա. Ֆեյերբախը: Պրոֆեսոր Կախարիայի հիմնարար աշխատությունը՝ «Ֆրանսիական իրավունքի դասագիրք», որտեղ հեղինակը ֆրանսիական իրավունքը դիտարկում է պատմա-փիլիսոփայական տեսանկյունից: Յախարիան պրոֆեսոր Կ. Միտտերմայերի հետ 1829 թ. հիմնադրում է «Իրավագիտության և արտասահմանյան օրենսդրության քննադատական ամսագիր»-ը⁷: Այդ ամսագիրը գոյատևեց մինչև 1953 թ. հրատարակված 26 հատորները պարունակում են քննադատական և համեմատական վերլուծական հսկայական նյութ՝ տարբեր երկրների քրեական, քրեական-դատավարական և քրեաբանության վերաբերյալ: XIX դարի երկրորդ կեսերին համեմատական իրավագիտության նշանավոր դեմքերից է նաև Ա. Ֆոյերբախը, որը լայնորեն օգտագործել է համեմատական մեթոդը քրեական օրենսդրության բնագավառում և փորձել է ստեղծել համեմատական իրավունքի գիտություն, որը մեկնաբանում էր որպես իրավունքի համընդհանուր պատմություն: Ֆոյերբախը մշակել է Բավարիայի քրեական օրենսգրքի նախագիծը, որը XIX դարի ընթացքում ծառայել է որպես մոդել (նմուշ) ինչպես Գերմանիայի, այսպես էլ այլ երկրների օրենսդիրների համար:

⁷ Տե՛ս «Kritische Zeitschrift für Rechtswissenschaft und Gesetzgebung des Auslandes»:

Եզրակացություն

Այսպիսով՝ XIX դարի առաջին և երկրորդ կեսերին Գերմանիայում նշանակալի քայլեր կատարվեցին համեմատական իրավագիտության զարգացման խնդրում:

Եթե XIX դարի առաջին կեսին համեմատական իրավագիտության կենտրոնը համարվել էր Գերմանիան, ապա XIX դ. երկրորդ կեսին այն տեղափոխվել է Ֆրանսիա: Այստեղ տարբեր իրավական համակարգերի համեմատական հետազոտությունները ամենից առաջ կատարվում էին գործնական-կիրառական նպատակներով և դրանով է պայմանավորված «համեմատական օրենսդրություն» տերմինի երևան գալը: Խնդրո հարցում էական դեր է խաղացել նաև այն, որ տվյալ ժամանակաշրջանում ֆրանսիական իրավագիտությունում իշխում էր պոզիտիվիստների դպրոցը: Իրավունքի փիլիսոփայության պոզիտիվիստական (և նեոպոզիտիվիստական) ուղղությունն իրավունքի ընդհանուր տեսության տեսքով զարգացել է XIX-XX դարերում՝ հիմնականում վերլուծական (այդ թվում՝ համեմատական-վերլուծական) իրավագիտության դիրքերից: Վերլուծական իրավագիտության գաղափարները և սահմանումներն իրենց հիմնավորումն ու զարգացումն են գտել Բ. Օստենի «Պոզիտիվ իրավունքի փիլիսոփայությունում», Հ.Քելզենի «Իրավունքի մասին զուտ ուսմունքում», «առաջնային և երկրորդական իրավական կանոնների մասին» Հ. Հարտի ուսմունքում, Օ. Վայնբերգերի «Իրավունքի ճանաչողական-քննադատական տեսությունում» և այլն:

1869 թ. Փարիզում հիմնադրվել է համեմատական օրենսդրության ընկերությունը, որը նշանակալի դեր է խաղացել համեմատական իրավագիտության զարգացման խնդրում: 1875 թ. ընկերությունը սկսել է հրատարակել «Տարեգիրք արտասահմանյան օրենսդրության» («Annuaire de législation étrangère») և «Տարեգիրք Ֆրանսիական օրենսդրության» («Annuaire de législation française») հանդեսները:

Ֆրանսիայի արդարադատության նախարարությանը կից ստեղծվել է «Արտասահմանյան օրենսդրության կոմիտե», որը համեմատական օրենսդրության ընկերության հետ համատեղ ապահովում էին օտարերկրյա օրենսգրքերի և կարևոր օրենսդրական ակտերի թարգմանությունը ֆրանսերենի: Համեմատական իրավագիտության զարգացումը Ֆրանսիայում կապված նշանավոր իրավաբան Ռ. Սալեյի աշխատությունների հետ: Վերջինս համեմատական իրավունքի նպատակը տեսնում էր ազգային իրավունքի կատարելագործման և հետագա զարգացման մեջ: Նա, ուսումնասիրելով իտալական, շվեյցարական և գերմանական պարտավորական իրավունքը, բացահայտել է դրանց ընդհանրությունները և այնպիսի լուծումների առկայությունը, որոնք կարող էին փոխառվել ֆրանսիական իրավունքի կողմից: Այսպիսով, համեմատական իրավագիտությունն աստիճանաբար տեսք է բերում նաև գործնական-կիրառական նշանակություն:

Անգլիացի պրոֆեսոր Ն. Բարունը համեմատական իրավագիտության սկզբնավորումն Անգլիայում կապում է երկու հիմնական իրադարձությունների հետ՝ 2. Դարվինի տեսակների ծագման մասին ուսմունք, ինչպես նաև մարդաբանության, փիլիսոփայության և կրոնի բնագավառում համեմատական հետազոտությունների և Բրիտանական կայսրության ընդարձակման հետ:

1861թ. լույս է տեսնում Հ. Մենի «Հին իրավունքը» գիրքը, որը Օքսֆորդի համալսարանի համեմատական իրավագիտության ամբիոնի վարիչն էր: Գրեթե նույն ժամանակաշրջանում ԱՄՆ-ում նույնպես սկսվում է իրականացվել համեմատական-իրավական հետազոտություններ և հիմնադրվում են հռոմեական իրավունքի ամբիոններ Իելսկոյ (1876թ.) և Կոլումբիայի (1880թ.) համալսարաններում:

Այդ երկրներում համեմատական իրավագիտության զարգացմանը խթան հանդիսացան նաև առևտրային կապերի ընդարձակումն այլ երկրների հետ: 1859 թ. լույս է տեսել անգլիացի պրոֆեսոր Ա. Լևի «Միջազգային առևտրային իրավունք» գիրքը, որտեղ հեղինակը համեմատական վերլուծության էր ենթարկել անգլիական առևտրային իրավունքը՝ 28 արտասահմանյան երկրների իրավունքի հետ:

1895 թ. հիմնադրվել է «Համեմատական իրավունքի ընկերություն»-ը, որը հրատարակեց «Համեմատական իրավունքի ընկերության ամսագիր»: Եթե ընկերության հիմնական նպատակն էր Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ստատուտային իրավունքի համակարգումը, ապա ամսագիրը խնդիր էր դրել իր ընթերցողներին ծանոթացնել իրավունքի հետ կապված իրադարձությունները:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո համեմատական իրավագիտության նկատմամբ հետաքրքրությունն Անգլիայում, ԱՄՆ-ում և ընդհանրապես աշխարհում, ավելի է մեծացել: 1900 թվականին Փարիզում կայացել է համեմատական իրավունքի առաջին միջազգային կոնգրեսը: Կոնգրեսում կարդացված զեկուցումները պարզաբանում էին համեմատական իրավագիտության հիմնական հասկացությունները և կատեգորիաները, մեթոդաբանությունը, խնդիրների և նպատակների հետ առնչվող հարցերը: Կոնգրեսը հսկայական ազդեցություն է ունեցել համեմատական իրավագիտության հետագա զարգացման վրա: Այսպես, XIX դարում Ֆրանսիայում ձևավորված «համեմատական օրենսդրության» հայեցակարգը XX դարի սկզբներին վերափոխվել է «համեմատական իրավունք» հայեցակարգի, այսինքն՝ համեմատական իրավագիտության հետազոտության օբյեկտն արդեն ոչ միայն պոզիտիվ օրենսդրությունն էր, այլև իրավաբանական պրակտիկան (կոմերցիոն, վարչական և նոտարական), տարբեր հեղինակների տեսական հայացքները և տարբեր իրավական համակարգերի պատմական զարգացման հիմնախնդիրները: Շնորհիվ համեմատական իրավագիտության ֆրանսիական դպրոցի՝ գիտական շրջանառության մեջ է դրվել «իրավական համակարգեր» հասկացությունը, որը փոխարինել է «օրենսդրության համակարգեր» հավասարությանը: Այս հանգամանքը հնարավորություն է տվել առավել ընդարձակելու համեմատական-իրավական հետազոտությունների ոլորտը: Համեմատական իրավունքի ինստիտուտներ հիմնադրվեցին Փարիզում և Լիոնում, որտեղ դասախոսությունները վերաբերում էին համեմատական իրավագիտության հրատապ հարցերի վերաբերյալ: Այդ ինստիտուտների գործունեությունը (Լիոնի ինստիտուտը հրատարակվել է համեմատական իրավագիտության հարցերի վերաբերյալ 42 հատոր, իսկ Փարիզի ինստիտուտը՝ 67 հատոր հանդեսներ) նպաստել է համեմատական իրավագիտության զարգացմանը ոչ միայն Ֆրանսիայում, այլև նրա սահմաններից դուրս:

XX դարի առաջին կեսին համեմատական իրավագիտությունը որոշակի զարգացում է ապրել նաև Գերմանիայում: Գերմանիայում ժամանակակից համեմատական իրավունքի հիմնադիր համարվում է Ռաբելը, որն ապացուցում էր, որ ուրիշ երկրների իրավական փորձը օգտակար կարող է լինել գերմանական իրավունքի կատարելագործման համար: Ռաբելը գիտության մեծ կազմակերպիչ էր, դրա վկայությունն է նրա կողմից հիմնադրված համեմատական իրավունքի ինստիտուտները, որտեղ կարդում էր համեմատական իրավունքի վերաբերյալ իր դասախոսությունները: Ռաբելը համեմատական իրավագիտությունը բաժանում էր երեք ճյուղերի՝ «ազգագրական իրավագիտություն», «պատմական համեմատություն» և «համեմատական իրավունքի համակարգված-դոգմատիկ գիտության»:

Վերջինում նա հասկանում էր «քաղաքկրթված իրավական համակարգերի» նորմերի համեմատական ուսումնասիրություն: 1933 թ. նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալու

հետևանքով առաջադեմ գիտնականները, այդ թվում և Է. Ռաբելը թողել են Գերմանիան: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համեմատական իրավագիտությունը, բնականաբար, անկում է ապրում:

Համեմատական իրավագիտությունը որոշակի զարգացում է ապրել նաև նախահեղափոխական Ռուսաստանում: Խնդրո բնագավառում նշանակալի ավանդ ունեն ռուս հայտնի իրավաբաններ Ն. Մ. Կորկունովը, Վ. Ի. Սեգիևիչը, Մ. Մ. Կովալևսկին, Պ. Գ. Վինոգրադովը, Ս. Մուրոմցևը, Գ.Ֆ. Շերշևիչը, Ֆ.Վ. Տարանովսկին և այլք: Առանձնապես նշանակալի հետք է թողել պրոֆեսոր Պ. Գ. Վինոգրադովը: Նա ռուսական ակադեմիայի իսկական անդամ էր, իսկ 1903 թվականից Օքսֆորդի համալսարանի համեմատական իրավագիտության ամբիոնի վարիչն էր: Նրա հիմնական աշխատություններն՝ «Происхождение феодальных отношений в Ланбардской Италии» (1881), «Очерки по теории права» (1915թ.), «Исследование по исторической юриспруденции» (1920թ.):

Համեմատական-պատմական մեթոդը Վինոգրադովն օգտագործում էր իրավունքի պատմական զարգացման հետազոտության համար, մասնավորապես այդ մեթոդի շնորհիվ նա համակողմանի վերլուծության է ենթարկել հռոմեական իրավունքի ռեցեպցիայի հիմնախնդիրները միջնադարյան Եվրոպայում: Ըստ Վինոգրադովի՝ իրավունքի զարգացման պատմական տիպերն են՝ 1. Իրավունքի ակունքները տոտեմական հասարակությունում, 2. Համայնական կամ տեղական իրավունք (Trial Law), 3. Քաղաքային իրավունք (Civil Law), 4. Միջնադարյան իրավունք, որպես կանոնական և ֆեոդալական իրավունքի համակցություն, 5. Բուրժուական իրավագիտություն, 6. Սոցիալիստական իրավագիտության սկիզբ:

Համեմատական իրավագիտությունը, ըստ Վինոգրադովի, կոչված է համակարգելու բազմաթիվ իրավական տպավորությունները, որոնք ստանում ենք հասարակական կյանքում:

Ընդհանրապես ռուսական իրավագիտությունը և իրավական միտքը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բավականին զարգացած էր և բոլորովին էլ չէր զիջում արևմտյան Եվրոպային:

Խորհրդային ժամանակաշրջանում համեմատական իրավագիտությունը, ըստ էության, զարգացում չապրեց, սակայն 70-80-ական թվականներին աշխուժություն նկատվեց գիտության այդ բնագավառում: Հատկապես արժանի է հիշատակել մի շարք խորհրդային գիտնական-իրավաբաններ՝ Ա. Լ. Չիվս, Վ.Պ. Կազիմիրչուկ, Ա. Ա. Տիլե, Վ. Ա. Տումանով, Գ. Վ. Շվեկով և այլք, որոնք նշանակալի ներդրում ունեցան համեմատական իրավագիտության ձևավորման և զարգացման խնդրում՝ Խորհրդային Միությունում: Պոստսոցիալիստական Ռուսաստանում նոր թափ ստացավ համեմատական իրավագիտությունը: Այն դասավանդվում է Ռուսաստանի առաջատար ուսումնական հաստատություններում, մշակվեցին և հրատարակվեցին հետևյալ դասագրքերն ու ուսումնական ձեռնարկները⁸:

Համեմատական իրավագիտության զարգացման արդի փուլը սկսվում է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այս ժամանակաշրջանի համեմատական իրավագիտությունը զարգանում է հետևյալ հիմնական ուղղություններով. 1) համեմատական իրավունքի ընդհանուր տեսական հիմնախնդիրներ՝ առարկան, նպատակը, գործառույթները և այլն, 2) հիմնական իրավական համակարգերի համեմատական հետազոտության, 3) ճյուղային իրավաբանական գիտությունների շրջանակում համեմատական վերլուծություններ:

Արդի ժամանակաշրջանի համեմատական իրավագիտության զարգացման կենտրոն-

⁸ Стів Марченко М. Н., Сравнительное правоведение, М., 2000: Тихомиров Ю. А., Курс сравнительного правоведение, М., 1996:

ները մնում են Արևմուտքի առաջատար համալսարաններն ու հաստատությունները (Հարվարդ, Օքսֆորդ, Սորբոն և այլն): Համեմատական իրավագիտության զարգացման խնդրում նշանակալի ավանդ են ներդրել ֆրանսիացիներ Ռ. Դավիթը և Մ. Անսելը, ամերիկացիներ Ռ. Շլեզենգերը և Ջ. Մերրիմենը, գերմանացիներ Կ. Ցվայգետը և Հ. Կյոսցը և այլք:

Համեմատական իրավագիտության բնագավառում լայնորեն հայտնի են հետևյալ հանդեսներն ու ամսագրերը՝ ֆրանսիական «Revue internationale de droit compare», գերմանական «Rafels Zeitschrift fur auslandisches und internationales Privatrecht», ամերիկյան «The American Journal Comparative Law», անգլիական «The international and Comparative Law Quarterly» և այլն:

Ժամանակակից համեմատական իրավագիտությունը, բացի գիտական-տեսական և ճանաչողական նշանակությունից, ձեռք է բերել նաև գործնական-կիրառական հնչեղություն: Այն հսկայական դեր է խաղում պետությունների, հատկապես նորանկախ, իրավաստեղծ ոլորտում:

Annotation. In this article the author has systematically analyzed the problems related to the origin and development of comparative jurisprudence in specific countries, in particular the origin and development of the idea of comparative jurisprudence in the ancient world, the development of the views of comparative jurisprudence in the Middle Ages, the historical-philosophical aspects of comparative jurisprudence direction In Germany, the development of comparative jurisprudence in England and the USA, comparative jurisprudence in Russia, comparative jurisprudence in the first half of the 20th century, comparative jurisprudence in the period after World War 2, comparative jurisprudence and international scientific cooperation. The ideas of comparative jurisprudence in the ancient world were more prominently manifested in the works of the philosophers of Ancient Athens and the lawyers of Ancient Rome, according to Western scholars, it was here that not only comparative-legal ideas were formed for the first time but also, in practice for the first time, an attempt was made to subject the state and law to comparative research. In the Middle Ages, the ideas of comparative jurisprudence had a certain development based on the borrowing (reception) of Roman law, the formation and coordination of canon law, as well as national legal system (mainly) on the basis of customary law. Comparative legal studies continued throughout the Middle Ages, up to modern times, when Montesquieu, Hugo Grotius, Pufendorf, and others succeeded one another.

In the new and modern period, comparative legal researches not only multiplied in terms of volume, but also took on a systematic nature and was gradually formed as an independent legal science

Аннотация. В данной статье автор детально систематически проанализировал проблемы, связанные с зарождением и развитием сравнительного правоведения, а также основные вехи исторического развития сравнительного правоведения в конкретных странах, в частности зарождение и развитие идеи сравнительного правоведения, сравнительное правоведение в древнем мире, развитие взглядов сравнительного правоведения в средние века, историко-философские аспекты направления сравнительного правоведения в Германии, развитие сравнительного правоведения в Англии и США, сравнительное правоведение в России, сравнительное правоведение в первой половине XX века, сравнительное правоведение в период после Второй мировой войны, сравнительное правоведение и международное научное сотрудничество. Идеи сравнительного правоведения в древнем мире наиболее ярко проявились в трудах философов Древних Афин и юристов Древнего Рима. По мнению западных ученых, здесь впервые сформировались не только сравнительно-правовые идеи, но и на практике впервые была предпринята попытка подвергнуть государство и право сравнительному исследованию. В средние века идеи сравнительного правоведения получили определенное развитие, основанное на заимствовании (рецепции) римского права, формировании и согласовании канонического права, а также национальных правовых систем (преимущественно) на основе обычного права. Сравнительно-правовые исследования продолжались на

протяжении всего Средневековья, вплоть до нового времени, когда сменяли друг друга Монтескье, Гуго Гроций, Пуфендорф и другие. В новый и современный период число сравнительно-правовых исследований не только увеличилось по объему, но и приобрели системный характер и постепенно сформировались как самостоятельная правовая наука.

Բանալի բառեր - համեմատական իրավագիտություն, մեթոդաբանություն, համակարգվածություն, հանրային և մասնավոր իրավունք, օրենք, նախադեպ, իրավակիրառ գործունեություն, սովորույթ:

Keywords: comparative jurisprudence, methodology, coordination, public and private law, law, precedent, law enforcement activity, convention.

Ключевые слова: сравнительная юриспруденция, методология, систематизация, публичное и частное право, закон, прецедент, правоприменительная деятельность, узус.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Давид Р., Основные правовые системы / Современности сравнительное право, М., 1967, էջ 25-26):
2. Книга правителя области Шан (Шан Дзюнь Шу.) М., 1993, էջ 212-213):
3. Марченко М.Н., Сравнительное правоведение, М., 2000; Тихомиров Ю. А., Курс сравнительного правоведения. М., 1996:
4. Марченко М.Н., Сравнительное правоведение. Общая часть. М., Зерцало, 2004, с. 42.
5. Нерсесянц В.С., История политических и правовых учений. М., 2014.
6. Романов А.К., Правовая система Англии. М., 2000.
7. Шумилов В.М., Правовая система США, М., 2006.
8. «Kritische Zeitschrift für Rechtswissenschaft und Gesetzgebung des Auslandes».

Վարդանյան Ռ. - իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ rafayel.vardanyan@investigator.am:

Շուքուրյան Ա. - ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլ. հասցե՝ shuqur@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 24.05.2023 թ., տրվել է գրախոսության 24.05.2023 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.10.2023 թ.:

<https://doi.org/10.59546/18290744-2023.4-9-13>

АДЕЛИНА САРГСЯН
*кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и
уголовно-процессуального права
Института права и политики Российско-Армянского университета*

ԱԴԵԼԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
*իրավաբանական գիտությունների թեկնածու,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և
քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս*

ADELINA SARGSYAN
*PhD in Law,
Lecturer of the Department of Criminal Law and
Criminal Procedure Law,
Institute of Law and Politics of the Russian-Armenian University*

КАЧЕСТВЕННОЕ ОБНОВЛЕНИЕ ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В УСЛОВИЯХ ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ ОБЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴԻԱՅՈՒՄԸ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՅԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

QUALITATIVE RENEWAL OF LEGAL EDUCATION IN THE CONTEXT OF DIGITAL TRANSFORMATION OF PUBLIC RELATIONS

Введение

В современном мире в условиях новой четвертой технологической революции, повлекшей за собой активный процесс цифровизации общественных отношений, необходимой является готовность права к цифровой трансформации. Возникновение цифровой среды, цифровой экономики, заключение сделок и договоров в цифровой среде требует соответствующего правового сопровождения различных цифровых проектов. Цифровая реальность – это та реальность, в которой нам предстоит жить в обозримом будущем и к которой нужно

быть готовыми, и прямое неприятие этой реальности ни к чему не приведет¹. Понятие «цифровая технология» широко применяется в ряде международных актов, так, например, в документе «Цифровая программа для Европы» (Digital Agenda for Europe) содержится план распространения цифровых технологий во всех сферах европейского социума, включая сферу правового регулирования². Неизбежен процесс внесения цифровыми технологиями корректив в традиционное юридическое образование. В конечном итоге, в основе современного юридического образования лежит междисциплинарность – на стыке права и цифровых технологий. Освоение современных IT-технологий и развитие в этом направлении — залог успеха юриста будущего³.

Вышеотмеченное актуализирует новую задачу современного юридического образования – подготовки юристов, владеющих цифровыми навыками и знаниями в области информационного права, защиты информационной безопасности. В настоящее время рынок труда в наибольшей степени нуждается именно в юристах, обладающих углубленными знаниями в сфере цифровых технологий (программирования). Сказанное требует коренного пересмотра традиционной концепции подготовки юристов в высших учебных заведениях, соответствия учебных программ современным реалиям. Нынешние потребности потенциальных работодателей включают в себя наличие профессиональных кадров в различных сферах управления, правоохранительных структурах, бизнесе в условиях цифровизации общественных отношений.

Таким образом, одним из основных направлений государственной политики в области образования является модернизация образования в условиях процессов цифровизации, совершенствование кадровых и образовательных процессов. Происходящие процессы цифровизации требуют взвешенного подхода к разработке новых подходов к организации профессиональных кадров-юристов, а равно обновлению юридического образования в целом. К сожалению, в подавляющем большинстве высшая школа в настоящее время осуществляет подготовку профессиональных юридических кадров, опираясь на старые стандарты и потребности рынка труда. Тем самым, на первый план выдвигается задача подготовки юристов нового поколения (юристов цифровой формации), качественного обновления образовательных стандартов высшего профессионального образования, повышение цифровой грамотности юристов, овладение ими базовыми цифровыми компетенциями, необходимыми для осуществления профессиональной деятельности в условиях цифровой экономики.

Основное исследование

Процесс подготовки юристов цифровой формации требует взвешенного подхода, основанного на анализе нынешних потребностей цифровой экономики. Одновременно, помимо содержательного обновления образовательных программ высших учебных заведений по направлению подготовки 40.03.01 (40.04.01) «Юриспруденция», в содержательном плане требуется обновление профессионального уровня подготовки и профессорско-преподавательского состава, непосредственно задействованного в подготовке юристов

¹ Трансформация права в цифровую эпоху: монография / Министерство науки и высшего образования РФ, Алтайский государственный университет; под ред. А.А. Васильева. — Барнаул: Изд-во Алт. ун-та, 2020, с. 14.

² European Parliament Resolution of 16 February 2017 with recommendations to the Commission on Civil Law Rules on Robotics (2015/2103(INL)). European Parliament. [Электронный ресурс]. Режим доступа: <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//>.

³ Электронный ресурс: <https://www.simplawyer.com/wp-content/uploads/Zakon.ru-Legal-Tech-and-lawyers-of-the-future.pdf> (дата обращения: 10.05.2023).

нового поколения. В настоящее время имеется объективная потребность в переподготовке педагогических работников юридических факультетов, в целях развития у них необходимых цифровых компетенций. Внедрение новых технологий и изменения в методах работы «новых юристов», вероятнее всего, изменят структуру спроса и предложения юристов на рынке труда во многих странах⁴. По прогнозам Юридического профессионального сообщества Великобритании, внедрение новых технологий через 15 лет (к 2025 г.) приведет к сокращению числа рабочих мест в сфере оказания юридических услуг на 20%⁵.

Происходящие процессы цифровой трансформации общественных отношений находят свое постепенное отражение и в соответствующей нормативно-правовой базе. Так, Федеральным законом от 18 марта 2019 г. № 34-ФЗ «О внесении изменений в части первую, вторую и статью 1124 части третьей Гражданского кодекса Российской Федерации» ГК РФ был дополнен ст. ст. 141.1 Цифровые права и 783.1 Особенности договора об оказании услуг по предоставлению информации.

Цифровизация общества и экономики, приводит к изменению приоритетов в выборе специальностей, падению социального спроса на гуманитарное образование в целом и юридическое, в частности. Складывающаяся практика дает возможность предположить, что спрос на профессии информационно-технологической, цифровой сферы в ближайшей перспективе резко превысит предложения, автоматически поднимется их престиж в обществе.⁶

По мнению Ричарда Сасскинда, одного из ведущих британских ученых в области права и технологий, реалии, определяющие сегодня мировоззрение юридического мира, необратимы, и перемены не ограничатся новыми технологиями, юридическая практика в перспективе изменится до неузнаваемости⁷. В то же время, в противовес этому, Т. Лейман отмечает, «в юридическом образовании эволюция она еще не началась каким-либо реальным образом»⁸. Другие отмечают, что «юридические институты и юристы находятся на перепутье и готовы измениться более радикально в течение следующих двух десятилетий, чем за последние два столетия»⁹.

Отмеченное вновь обосновывает необходимость пересмотра содержания и целей юридического образования, органического сочетания преподавания как традиционных, так и новых юридических дисциплин в высших учебных заведениях.

Мнения, что учебные программы юридических школ нуждаются в перезагрузке, придерживается большинство экспертов. Объясняется это тем, что разрыв между требованиями рынка и компетенциями, которыми обладают многие выпускники юридических факультетов, порой ошеломляет.¹⁰

Обращение к федеральным государственным образовательным стандартам высшего

⁴ Четвернина Т.Я., Четвернина А.В., Профессия юриста: основные векторы изменений в период цифровой трансформации // Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал. 2022, с. 128.

⁵ Key directions in legal education. National and international perspectives. -London : New York : Routledge, 2020, p. 66.

⁶ Жильцов Н.А., Чердаков О.И., К концепции развития юридического образования в эпоху цифровой экономики // М., 2018, с. 24.

⁷ Susskind R., Tomorrow's Lawyers: An Introduction to your Future. - 2 nd edn. -Oxford : Oxford Univ. Press, 2017, 240 p.

⁸ Leiman T., Educating for the past, the present or the future? // Imperatives for legal education research : then, now and tomorrow / ed. by B. Golder, M. Nehme, A. Steel and P. Vines. - London ; New York, 2020, p. 246-271.

⁹ Twining W., Rethinking legal education // The law teacher, 2018, Vol. 53, N 3, p. 241-259. DOI: 10.1080/03069400.2018.1497260.

¹⁰ Алферова Е.В., Трансформация юридического образования: размышления ученых о его настоящем и будущем

образования для бакалавриата позволяет найти лишь две общепрофессиональные компетенции, содержащие цифровой компонент. В то же время приходится констатировать об отсутствии должного цифрового компонента профессиональных компетенций, осваиваемых студентами юридических факультетов. Таким образом, полагаем необходимым предусмотреть в учебных планах высших учебных заведений новых «цифровых» дисциплин с одновременным закреплением тех компетенций, которые формируют у обучающихся данные дисциплины.

Интересным является опыт Национального исследовательского университета «Высшая школа экономики», имеющего бакалаврскую программу «Цифровой юрист». Программа готовит новый тип «цифрового юриста»: вооруженного не только знанием права, но и пониманием технологий, владеющего необходимыми «мягкими навыками» для командной работы¹¹.

Приходится с сожалением констатировать, что нынешние образовательные программы не предполагают обучения таким важнейшим вопросам, как правовые аспекты информационной инфраструктуры государства, обеспечение кибербезопасности, правовое сопровождение технологий Блокчейн, не владеют навыками разрешения правовых споров в цифровом пространстве, что, на наш взгляд, должно найти отражение в новых образовательных программах высших учебных заведений.

Представляется необходимым оснащение учебных планов по направлению подготовки «Юриспруденция» различными дисциплинами, позволяющими в соответствующих областях профессиональной деятельности обладать широким набором компетенций, в числе которых, в частности, могут быть следующие: в научно-исследовательской деятельности обучающиеся смогут обладать способностью проведения научных исследований по вопросам правового сопровождения цифровизации общественных отношений; в консультационной области обучающиеся приобретут навыки оказания правовых консультаций в сфере правового регулирования цифровых отношений; в правоприменительной деятельности – давать грамотную юридическую оценку правонарушениям в сфере цифровой безопасности и т.д.

Диапазон инновационных направлений, требующих адекватного правового сопровождения и, соответственно, обновления профессии современного юриста, весьма широк, включая в себя, среди прочего, блокчейн-юриста, занимающегося консультированием компаний, использующих блокчейн-технологии, а также созданием программных решений в области финансов и права¹², правовая защита интеллектуальных прав в цифровом пространстве; работа с цифровыми доказательствами, навыки ведения цифрового документооборота; цифровое уголовное судопроизводство (форензика; киберпреступность; цифровая трасология и пр.).

В контексте отмеченного, полагаем, что основным направлением деятельности современных высших учебных заведений является детальное обсуждение технологизации юридической профессии с целью подбора новых дисциплин в сфере IT, преследующих цель ознакомления студентов с цифровой средой и профессиональной деятель-

// Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал. 2022, с. 46.

¹¹ Электронный ресурс: <https://www.hse.ru/ba/dlawyer/passport> (дата обращения: 20.04.2023).

¹² Электронный ресурс: <https://www.hse.ru/trendprof/blockchain> (дата обращения: 20.04.2023).

ностью в данном пространстве. Таким образом, предполагается одновременное органичное сочетание технологий и права, что в своей совокупности позволит **достигнуть наивысшего уровня профессиональных способностей юристов нового поколения. В частности, можно предусмотреть такие дисциплины (в зависимости от уровня: бакалавриат/ магистратура), как Правовая ответственность в области защиты информации; Цифровое (информационное право); Цифровое уголовное право; Цифровое уголовное судопроизводство; Защита прав человека в цифровой среде и т.д.**

Важным направлением, способствующим научному осмыслению дальнейшей судьбы юридического образования, может стать создание при юридических факультетах высших учебных заведений научно-образовательных центров, основной миссией которых будет являться генерация идей по вопросам цифровой трансформации юридического образования; сравнительно-правовых исследований с целью заимствования позитивного зарубежного опыта подготовки цифровых юристов; аналитический обзор основных потребностей современного рынка юридических услуг; непрерывные процессы кооперации с ведущими техническими вузами и компаниями. Первоначальным шагом в деятельности подобных центров должна стать, на наш взгляд, разработка Концепции либо Дорожной карты по цифровой трансформации юридического образования, служащей дальнейшим ориентиром при разработке новых образовательных программ; качественном обновлении содержания имеющихся образовательных программ.

Опросэкспертов, проведенный порталом ГАРАНТ.РУ, показал, что в России, превалирует мнение экспертов, что будущих юристов надо учить пользоваться информацией – и это важнее штудирования законов; учить ориентироваться в развивающихся цифровых условиях: в новом программном обеспечении, аналитических технологиях и платформах отчетности, которые используют работодатели или клиенты; осваивать несвойственные юриспруденции сферы знаний, чтобы быть конкурентоспособным на рынке труда; в учебную программу вузов включать дисциплины, позволяющие обучающемуся приобрести навыки в сфере новых технологий, в том числе сбор доказательств в сети, обеспечение кибербезопасности, электронное делопроизводство и др.¹³

Е.В. Алферова совершенно справедливо поднимает вопрос относительно того, до какого уровня надо погружать обучающегося в цифровые технологии, чтобы избежать в будущем «ловушки компьютеризации»¹⁴. Так, М.А. Рожкова отмечает, что «юристу, если он хочет стать продвинутым специалистом, нужно получить хорошее базовое образование и постоянно совершенствоваться, а вот становится программистом в надежде, что это поможет стать успешным юристом, точно не стоит... ему нужны минимальные технические познания и элементарная заинтересованность в том, чтобы получать такие знания»¹⁵. Не соглашаясь с вышеуказанным мнением, в то же время отметим, что на данный момент, полагаем, нет необходимости в выделении полностью отдельной бакалаврской программы, направленной на подготовку цифровых юристов. Безусловно, овладение

¹³ Алферова Е.В., Дилеммы юридического образования в контексте цифровизации // Право и управление. XXI век. с. 17.

¹⁴ Алферова Е.В., Там же.

¹⁵ Электронный ресурс: «Новые юристы»: Какие специалисты нужны цифровой экономике: интервью с членом экспертного Совета комитета Госдумы по информационной политике, информационным технологиям и связи, профессор БФУ им. И. Канта М. А. Рожковой. 2019. URL: <https://na.ria.ru>. (дата обращения: 20.04.2023)

ими цифровыми компетенциями является необходимым и в настоящее время определяющим, однако, тем не менее, основной упор должен быть сделан именно на чисто правовую подкованность и подготовленность юристов. В связи с отмеченным, целесообразным, по нашему мнению, является предусмотрение в программах бакалавриата дополнительных узкопрофилированных дисциплин, преследующих цель усвоения студентами цифровых компетенций современного юриста.

Перспективным направлением образовательной политики высших учебных заведений через призму цифровизации является цифровая криминалистика, готовящая «цифровых криминалистов». В настоящее время крайне востребованным является именно сочетание правовых и технических знаний. О важности цифровой криминалистики отмечается и в модуле, разработанном в рамках инициативы «Образование для Правосудия» (E4J), являющейся компонентом Глобальной программы по осуществлению Дохинской декларации, Управления Организации Объединенных Наций по наркотикам и преступности (УНП ООН) и являющемся частью серии учебных модулей «Образование для правосудия» (E4J) по Киберпреступности¹⁶. Рассматривая зарубежный опыт в данной области, следует выделить Каледонский университет Глазго, в котором действует отдельная бакалаврская образовательная программа «Цифровая безопасность, криминалистика и этический взлом».

В дальнейшем, по мере готовности университета к столь важному шагу, еще одним возможным направлением цифровой модернизации юридического образования может стать создание профильной базовой кафедры при юридических факультетах, отвечающей за цифровой блок правового профиля. Это может быть в обобщенном виде Кафедра «Цифрового права», вбирающая в себя широкий спектр междисциплинарных дисциплин. Значимость подобного предложения видится в создании в университете мощной научной школы, занимающейся подготовкой юристов нового поколения, владеющих необходимым набором цифровых компетенций. Повсеместное развитие процессов цифровизации создает новые угрозы правам личности в цифровом пространстве, что также требует профессиональной подготовленности юристов. Безусловно, залог успешной деятельности юриста является именно классическое (традиционное) юридическое образование, адаптированное, однако, под нынешние реалии, с учетом чего выпускаемые кадры смогут грамотно применять свои профессиональные знания и навыки к отношениям, связанным с использованием и внедрением новых информационных технологий.

Необходимым является определение и очерчивание круга базовых цифровых компетенций, которыми должны обладать юристы нового поколения.

7. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Ա.Գևորգյանի կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված միջնորդության համաձայն՝ «(...) [Դ] արարանի՝ 2022 թվականի հուլիսի 20-ի՝ Ա.Մանուկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է 2022 թվականի հուլիսի 28-ին: Նշված որոշման «որոշեց» մասում դատարանի կողմից նշվել է. «որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում», մինչդեռ վիճարկվող որոշումը ենթակա է եղել բողոքարկման 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համաձայն (որով բողոքարկման համար սահմանվել է տասնօրյա ժամկետ): Այլ կերպ, դատարանը բողոքարկման ընթացակարգի մասին տվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, անորոշ, դատավարության մասնակիցներին մոլորության մեջ զցող պարզաբանումներ, ինչը կարող է հանգեցնել արդարադատության շահի, ինչպես նաև անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:

Նման պայմաններում սույն դատական ակտի պարզաճ բողոքարկումը գործնականում անհնար է եղել, իսկ բողոքը ժամկետանց գնահատվելու և առանց քննության թողնվելու արդյունքում դատախազությունը կարող է զրկվել ամբաստանյալ Ա.Մանուկյանի նկատմամբ գործուն զղջալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատական ակտը վիճարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում կարող է խախտվել հանրային և մասնավոր շահերի Սահմանադրությամբ երաշխավորված հավասարակշռությունը: (...)»²:

8. 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն հանգամանքը, որ բողոքաբերի կողմից որպես բողոքարկման ժամկետ հիմք է ընդունվել Առաջին ատյանի դատարանի որոշումը՝ չպետք է մեկնաբանվի ի վնաս բողոքաբերի, քանի որ հակառակ մեկնաբանությունն անհամաչափ խիստ կլինի և չի բխի հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու քրեադատավարական սկզբունքից:

(...)

¹ Տե՛ս քրեական գործ, հավելված 1-ին, թերթ 36:

² Տե՛ս քրեական գործ, հավելված 1-ին, թերթեր 62-63:

Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ բողոքարկման համար բաց թողնված ժամկետը ունեցել է օբյեկտիվ հիմքեր, և հաշվի առնելով նաև այն, որ բողոքը բերվել է առաջին արյանի դատարանի դատական ակտում նշված մեկամսյա ժամկետում, ուստի հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բաց թողնելը համարվում է հարգելի և ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

9. Նախքան սույն գործով բարձրացված իրավական հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքաբերի կողմից Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի որոշման բողոքարկման հնարավորությանը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից⁴:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտերի բողոքարկման իրավունքը որպես դատարանի մատչելիության իրավունքի իրացման եղանակ անձի արդար դատաքննության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի⁵ կարևորագույն բաղադրիչներից է: Սակայն, այդ իրավունքը բացարձակ չէ, քանի որ օրենսդիրը սահմանում է անմիջականորեն բողոքարկման ենթակա դատական ակտերի սպառիչ շրջանակ:

9.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման ենթակա են վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման արդյունքով կայացված դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի հետևյալ դատական ակտերը.

1) առանց վարույթը կարճելու՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին.

³ Տե՛ս քրեական գործ, հավելված 2-րդ, թերթեր 6-7:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Staroszyk v. Poland* գործով 2007 թվականի մարտի 22-ի վճիռը, գանգատ թիվ 59519/00, կետ 125:

⁵ Դատարանի մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսանալու վերաբերյալ տե՛ս **GOLDER v. UNITED KINGDOM** գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1975 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ 4451/70, կետ 28:

2) կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի ժամկետը երկարաձգելու, կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև կալանքը վերացնելու կամ կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին.

3) դատական տուգանք նշանակելու մասին.

4) վարույթից հեռացնելու մասին.

5) դատարան հարկադրաբար ներկայացնելու մասին.

6) գրավը պետության եկամուտ դարձնելու մասին.

7) վերաքննիչ բողոքը կամ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման բողոքն առանց քննության թողնելու մասին.

8) վերաքննիչ վարույթը կամ վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման վարույթը կարճելու մասին.

9) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ դատական ակտեր»:

10. Վերոշարադրյալ քրեադատավարական նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ հատուկ վերանայման բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված չէ որպես «անմիջական բողոքարկման» ենթակա դատական ակտ, հետևաբար դրա իրավաչափությունը կարող է վիճարկվել «հետաձգված բողոքարկման» գործով վարույթը եզրափակող դատական ակտի բողոքարկման շրջանակներում, ինչով էլ **պարտադիր պետք է երաշխավորվի վերոնշյալ միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշման հետ կապված հանգամանքների համակողմանի քննությունը**⁶:

Մինչույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դատական ակտերը, որոնց անմիջական բողոքարկման հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ (չեն հանդիսանում անմիջական բողոքարկման առարկա), «հետաձգված բողոքարկման» կարգով կարող են վիճարկվել, եթե՝

- անմիջական բողոքարկման առարկա չհանդիսացող դատական ակտն առերևույթ առնչվում է շահագրգիռ անձի որևէ սուբյեկտիվ իրավունքին կամ իրավաչափ շահին,

- եզրափակիչ դատական ակտը ենթակա է բողոքարկման ընդհանուր կարգով:

Նման հավասարակշռված մոտեցումը, Վճռաբեկ դատարանի համոզմամբ, կոչված է երաշխավորելու մի կողմից՝ անձի արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մասը կազմող դատարանի մատչելիության իրավունքի ապահովումը, մյուս կողմից՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից զերծ պահելու, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետության իրավաչափ նպատակները՝ կանխելով քրեական վարույթի ընթացքում կայացված ցանկացած դատական ակտ դատավարության մասնակիցների կողմից ինքնանպատակ բողոքարկելու հնարավորությունը:

11. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 9-ի՝ «Հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելու և դատական վարույթը գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին» որոշումը, որով բավարարվել է հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բաց թողնելը

⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի փետրվարի 14-ի թիվ ՍԴՈ-1191, Վճռաբեկ դատարանի՝ Գևորգ Ալեքյանի գործով 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ ՇԴ/0109/06/19 որոշումները:

հարգելի համարելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում միջնորդական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի միջնորդությունը, ենթակա է «հետաձգված բողոքարկման»՝ Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ի որոշման բողոքարկման շրջանակներում, քանի որ առերևույթ առնչվում է բողոքաբերի սուբյեկտիվ իրավունքներին:

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

12.1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը.

1) առանց վարույթը կարճելու՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին (...):»:

Նույն օրենսգրքի 390-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման բողոքը բերվում է համապատասխան դատական ակտն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում (...):»:

Նույն օրենսգրքի 356-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 4. Դատական վերանայման բողոք բերելու՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնող անձն իրավունք ունի բողոքին կցելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

5. Բաց թողնված ժամկետը վերականգնվում է, եթե միջնորդության մեջ ներկայացված պատճառներով պատշաճ բողոքարկումը գործնականում անհնար էր: (...):»:

13. Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը դատական վերանայման բողոք բերելու համար սահմանված բաց թողնված ժամկետի վերականգնման հնարավորությունը կապում է դատական ակտի գործնականում պատշաճ բողոքարկման անհնարինության հետ: Այլ կերպ, օրենսդիրը դատարանին վերապահել է բաց թողնված ժամկետի վերականգնման լիազորություն միայն այն դեպքում, երբ անձն օբյեկտիվորեն, իրենից անկախ պատճառներով հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված ժամկետում բողոք ներկայացնել: Հետևաբար, այն դեպքում, երբ դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողումը պայմանավորված է եղել այլ՝ սուբյեկտիվ գործոններով, որոնք չեն հանգեցրել պատշաճ բողոքարկման անհնարինության՝ բաց թողնված ժամկետի վերականգնումը չի կարող արդարացված համարվել:

14. Վճռաբեկ դատարանը, «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության գործով անդրադառնալով քրեական գործի շրջանակներում կայացված որոշումների բողոքարկման բաց թողնված ժամկետը իրավունքի ուժով հարգելի համարելու դեպքերին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Ի]րավասու մարմնի կողմից ինչպես իր կայացրած որոշման բողոքարկման ընթացակարգի մասին պարզաբանումներ ընդհանրապես չտրամադրելը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ և դատավարության մասնակիցներին մոլորության մեջ գցող պարզաբանումներ տրամադրելը հավասարապես հակասում են օրինականության սկզբունքին և հանգեցնում անձանց **իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման:** (...) Այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի դրսևորած անբարեխղճության հետևանքով համապատասխան որոշումը բողոքարկելու կարգի թույլ տրված խախտումը հնարավոր

է վերացնել դատական վարույթում (օրինակ՝ բաց է թողնվել բողոքարկման ժամկետը), դատարանը պետք է իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի համարի այդ խախտումը և բողոքը քննարկի ըստ էության:

(...)

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը պայմանավորված է մի կողմից անձի՝ միջազգային-իրավական և սահմանադրաիրավական նորմերով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության, մյուս կողմից՝ այդ պաշտպանությունն իրականացնելիս օրինականության սկզբունքի պահպանման անհրաժեշտությամբ⁷:

14.1. Վերահաստատելով և զարգացնելով վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քրեական վարույթի շրջանակներում իրավասու մարմնի կողմից կայացված վարութային ակտերի բողոքարկման ընթացակարգի կամ ժամկետների վերաբերյալ պարզաբանումներ չտրամադրելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ կամ մոլորության մեջ գցող պարզաբանումներ տրամադրելու հետևանքով թույլ տրված խախտումն իրավունքի ուժով (*ex jure*) հարգելի համարելու վերաբերյալ դիրքորոշումը պայմանավորված է անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովման անհրաժեշտության հետ:

Այս առումով պետք է փաստել, որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավատեր կարող է լինել բացառապես վարույթի մասնավոր մասնակիցը: Ինչ վերաբերում է դատական բողոքարկման իրավունք ունեցող վարույթի հանրային մասնակցին, մասնավորապես՝ դատախազին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումները վերջինիս նկատմամբ կիրառելի չեն: Մասնավորապես, դատախազը, որպես վարույթի հանրային մասնակից, ներկայացնելով պետական մարմինը, ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, կաշկանդված է օրինականության սկզբունքով, հետևաբար իր իրավական կարգավիճակով պայմանավորված, ի պաշտոնե պարտավոր է ունենալ պատշաճ մասնագիտական պատրաստվածություն, ներպետական ու միջազգային իրավունքի վերաբերյալ համապատասխան մասնագիտական գիտելիքներ՝ միաժամանակ քայլեր ձեռնարկելով դրանց շարունակական կատարելագործման ուղղությամբ⁸:

15. Սույն որոշման նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն որոշման 12.1-րդ կետում մեջբերված իրավադրույթների և 13-րդ կետում կատարված իրավական վերլուծության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավասու մարմնի կողմից որոշման բողոքարկման ժամկետների մասին վարույթի հանրային մասնակցին պարզաբանումներ չտրամադրելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներին չհամապատասխանող, ոչ ամբողջական, անորոշ կամ մոլորության մեջ գցող պարզաբանումներ տրամադրելը չի կարող դիտարկվել պատշաճ բողոքարկումը գործնականում անհնարին դարձնող օբյեկտիվ հիմք: Այլ կերպ՝ նշված դեպքում առկա չէ օբյեկտիվորեն, անձի կամքից անկախ գոյություն ունեցող այնպիսի հանգամանք, որը կարող է հանգեցնել օրենքով սահմանված ժամկետներում պատշաճ բողոքարկման անհնարինության, հետևաբար չի կարող բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմք հանդիսանալ:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված թիվ ԳԴ-3/0001/11/14 որոշման 15-րդ կետը:

⁸ Տե՛ս, մասնավորապես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածը:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 20-ի որոշման եզրափակիչ մասում արձանագրվել է դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետ⁹:

- ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված միջնորդության համաձայն՝ բողոքարկման ժամկետի բացթողումը պայմանավորված է եղել Առաջին ատյանի դատարանի կողմից բողոքարկման համար սահմանված ժամկետը սխալ պարզաբանելով, որպիսի պայմաններում պատշաճ բողոքարկումը գործնականում անհնար է եղել¹⁰:

- *Վերաքննիչ դատարանը, քննության առնելով դատախազի միջնորդությունը, հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բաց թողնելը համարել է հարգելի՝ փաստելով, որ բողոքարկման համար բաց թողնված ժամկետը ունեցել է օբյեկտիվ հիմքեր*¹¹:

17. Նախորդ կետում նշված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-15-րդ կետերում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 20-ի որոշման եզրափակիչ մասում տեղ գտած ձևակերպումը՝ դատական ակտի վերաքննության կարգով բողոքարկման մեկամսյա ժամկետի վերաբերյալ, չի կարող հանդիսանալ պատշաճ բողոքարկումը անհնարին դարձնող օբյեկտիվ հիմք: Մասնավորապես, դատախազը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, կաշկանդված լինելով օրինականության սկզբունքով և ի պաշտոնե ունենալով իր մասնագիտական գիտելիքները կատարելագործելու պարտականություն՝ պարտավոր էր որպես դատական ակտի բողոքարկման ժամկետ հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածով սահմանված տասնօրյա ժամկետը: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բացթողելը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությամբ չեն ներկայացվել պատշաճ բողոքարկումը գործնականում անհնար դարձնող հանգամանքներ:

Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից արձանագրված այն հանգամանքը, որ *բողոքը բերվել է Առաջին ատյանի դատարանի դատական ակտում նշված մեկամսյա ժամկետում, չի կարող էական նշանակություն ունենալ միջնորդության մեջ ներկայացված պատշաճ բողոքարկումը գործնականում անհնար դարձնող հանգամանքները գնահատման ենթարկելիս:*

18. Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ վերանայման բողոքի համար սահմանված ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը:

2. Արդարադատությունը, դատախազական հսկողությունը, նախաքննությունը, հետաքննությունը և հանրային այլ գործունեությունն իրականացվում են բացառապես իրավունքի շահից ելնելով՝ օրենքի հիման վրա սրբեղծված իրավասու մարմինների կողմից:

(...):»:

⁹ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

¹¹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Դատական վերանայման արդյունքով բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտում է դատական վարույթի ընթացքում քրեական վարույթի որևէ սկզբունքի խախտումը»:

20. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, դատախազ Ա.Գևորգյանի կողմից հատուկ վերանայման բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելով և ըստ էության քննության առնելով ու լուծելով, իրեն վերապահված լիազորությունն իրականացրել է՝ դուրս գալով իրավունքի շահից: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ վարույթի հանրայնության սկզբունքի խախտում, որն իր բնույթով էական է և հիմք է Վերաքննիչ դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ի դատական ակտը բեկանելու և դրան փոխարինող դատական ակտ կայացնելու համար՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 20-ի որոշմանը¹²:

21. Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն առարկայազուրկ է համարում բողոքաբերի՝ սույն որոշման 4.1-րդ և 4.2-րդ կետերում բարձրացված փաստարկներին անդրադառնալով:

22. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 31-րդ, 34-րդ, 359-րդ, 361-363-րդ, 386-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հատուկ վերանայման բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 20-ի որոշմանը՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

¹² Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Հրայր Հովսեփյանի գործով 2020 թվականի մայիսի 25-ի թիվ ԵԴ/0426/11/18, Ավաթ Ամինիի գործով 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումները:

ԼԴ2/1953/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2023 թվականի հուլիսի 17-ին

գրավոր ընթացակարգով քննելով Անդրանիկ Քոչարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Անդրանիկ Քոչարյանի դիմումի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Անդրանիկ Քոչարյանը պահանջել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից 16.06.2020 թվականին կայացված և 02.07.2020 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 15-4874/20 որոշման հարկադիր կատարման համար տալ կատարողական թերթ:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Զաքարյան) 02.12.2021 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր Գ. Թորոսյան, դատավորներ Մ. Հարթենյան, Դ. Սերոբյան) 04.05.2022 թվականի որոշմամբ «Յունիբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 02.12.2021 թվականի որոշումը վերացվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Բ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 07.09.2022 թվականի որոշմամբ Անդրանիկ Քոչարյանի միջնորդությունը՝ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի կողմից 16.06.2020 թվականին Երևան քաղաքում կայացված և 02.07.2020 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 15-4874/20 որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, և դիմումը՝ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի կողմից 16.06.2020 թվականին կայացված և 02.07.2020 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 154874/20 որոշումը ճանաչելու ու դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջը բավարարելու մասին,

րողական թերթ տալու պահանջի մասին, մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 30.11.2022 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 07.09.2022 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անդրանիկ Քոչարյանը (ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասը, 345-րդ հոդվածի 2-րդ մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ և 13-րդ հոդվածները, «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի տառացի մեկնաբանությունից բխում է, որ դատարանն իրավասու է հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումը մերժել բացառապես այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման: Նշված իրավական նորմը որևէ կերպ չի նախատեսում կարգավորում այն մասին, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմումը կարող է մերժվել՝ կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ դիմում ներկայացնելու ժամկետը բաց թողնելու հիմքով:

Վերաքննիչ դատարանի կողմից կատարված վերլուծության պայմաններում իմաստազրկվում է նաև հաշտարարի ինստիտուտի նպատակը, քանի որ նշված վերլուծությամբ դատական պրակտիկա ձևավորվելու դեպքում հաճախորդները կարող են փաստացի զրկվել հաշտարարի որոշման հիման վրա հարկադիր կատարում ստանալու իրավունքից: Նման պայմաններում կսահմանափակվի նաև հաճախորդների դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու իրավունքը, քանի որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ հարկադիր կատարումը հանդիսանում է դատական պաշտպանության իրավունքի մաս:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.11.2022 թվականի որոշումը և այն փոփոխել՝ դիմումը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 16.06.2020 թվականին Ֆինանսական համակարգի հաշտարարը կայացրել է թիվ 15-4874/20 որոշումը (այսուհետ՝ նաև Որոշում)՝ 300.000 ՀՀ դրամի չափով Բանկի դեմ ուղղված Անդրանիկ Քոչարյանի պահանջը բավարարելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 15-24**).

2) Որոշումը կողմերի համար պարտադիր է դարձել 02.07.2020 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

3) 10.08.2020 թվականին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանում ստացվել է Բանկի դիմումը՝ Որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին (քաղաքացիական գործ՝ թիվ ԼԴ2/1535/02/20)։

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19.04.2021 թվականի որոշմամբ Բանկի դիմումը մերժվել է։ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.09.2021 թվականին կայացված որոշմամբ («www.datalex.am» պաշտոնական կայքում հրապարակվել է 10.11.2021 թվականին) Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19.04.2021 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ։ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճարելության կարգով չի բողոքարկվել, և 01.12.2021 թվականին մտել է օրինական ուժի մեջ (**հիմք՝ «www.datalex.am»** պաշտոնական կայքը)։

4) Անդրանիկ Քոչարյանը Որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը Դատարան է ներկայացրել 27.10.2021 թվականին՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել դիմումը դատարան ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը (**հատոր 1-ին, գ.թ. 3-30, «www.haypost.am» կայքը**)։

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր։

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանը նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների համարեքստում անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին.

Որ դեպքերում է ենթակա վերականգնման բաց թողնված դատավարական ժամկետը, եթե Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ։

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը։

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ՝ սկսած այն օրվանից, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը պարտադիր է դարձել կողմերի համար։

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ծանուցելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է պարտադիր։ (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշ-

ման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել հաճախորդը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն դեպքում, երբ հաճախորդը նույն օրենքով սահմանված կարգով համաձայնվում է որոշման հետ, իսկ Կազմակերպությունը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ստանում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և կատարողական թերթ տալու մասին.

2) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և կատարողական թերթ տալը մերժելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը բավարարելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին.

2) դիմումը մերժելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե *ինչ որոշում է ենթակա կայացման այն պարագայում, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ, և բացակայում է բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը*, արձանագրել է նաև, որ այն դեպքում, երբ հաճախորդը «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համաձայնվում է որոշման հետ, իսկ Կազմակերպությունը սահմանված կարգով և ժամկետում չի կատարում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը, հաճախորդն իրավունք է ձեռք բերում կատարողական թերթ ստանալու նպատակով դիմելու իրավասու դատարան: Մինևույն ժամանակ, օրենսդիրը որոշակի ժամկետ է սահմանել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման նպատակով կատարողական թերթ ստանալու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու համար՝ նախատեսելով, որ հաճախորդն այդ դիմումը ներկայացնում է ***Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու պահից սկսած մեկ տարվա ընթացքում***: Ընդ որում, Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար դառնում է պարտադիր, երբ այն ծանուցելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդն անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվում է որոշման հետ:

Օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացնելու հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը բավարարելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ճանաչելու և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին.

2) դիմումը մերժելու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու

և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը (345-րդ հոդվածի 2-րդ մաս) որպես ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը մերժելու հիմք նախատեսել է բացառապես այն դեպքը, երբ դիմումի քննության արդյունքում պարզվում է, որ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը ենթակա է չեղյալ ճանաչման: Նշված դիմումը մերժելու այլ հիմք, այդ թվում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումը ներկայացվել է օրենքի պահանջի խախտմամբ, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով չի նախատեսել: Միևնույն ժամանակ նշված դեպքը նույն օրենսգրքով չի նախատեսվել նաև որպես այդ դիմումն առանց քննության թողնելու հիմք: Նշված դեպքը որպես դիմումը մերժելու ինքնուրույն հիմք օրենսդիրը նախատեսել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով՝ սահմանելով, որ **դատարանը մերժում է կատարողական թերթ տալու դիմումը, եթե լրացել է կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու ժամկետը, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:**

Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը կողմերի համար պարտադիր դառնալու պահից սկսած մեկամյա ժամկետը լրանալուց հետո, և այդ ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվում է, դատարանը պետք է կայացնի այդ դիմումը մերժելու մասին որոշում՝ ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով (տես ըստ Նաիրա Աբգարյանի դիմումի՝ *Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին, թիվ ԼԴ2/1719/02/20 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի փետրվարի 24-ի որոշումը*):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն հարցին, թե *Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացված լինելու պայմաններում արդյո՞ք առկա է նույն որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ հաճախորդի կողմից դիմում ներկայացվելու հնարավորություն*, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի վկայակոչմամբ արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ *Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելիս պարզվում է, որ դատարանի վարույթում առկա է Ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ապա դատարանը պետք է ներկայացված դիմումը թողնի առանց քննության*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջն անմիջականորեն ուղղված է դատարանին, և հաճախորդին չի ազատում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականությունից, քանի որ գործող իրավակարգավորումների պայմաններում ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը չի կասեցնում նույն որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնե-

լու՝ օրենքով սահմանված ժամկետի հոսքը: Հաճախորդը պարտավոր է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացնել օրենքով սահմանված վերը նշված ժամկետում անգամ այն ժամանակ, երբ առկա է ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ՝

1) **Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու դեպքում դիմողը պետք է բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնի**, որպիսի պահանջը բխեցրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ընդհանուր կանոնից,

2) **դատարանը, քննության առարկա դարձնելով միջնորդությամբ ներկայացված հանգամանքները և պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, պետք է որոշում կայացնի միջնորդությունը բավարարելու և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, ինչը հետապնդում է իրավաչափ նպատակ:**

Վերահաստատելով և զարգացնելով վերը նշված նորմերի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **թեկուզև** այդ դիրքորոշումների համաձայն՝ հաճախորդը պարտավոր է համապատասխան դիմումը դատարան ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում անգամ այն դեպքում, երբ առկա է Ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, **այնուամենայնիվ**, ՀՀ վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ չի բացառել նաև այնպիսի դեպքերը, երբ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել նաև օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ՝ ներկայացնելով բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, որի պարագայում դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, պետք է որոշում կայացնի միջնորդությունը բավարարելու և բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով այն հարցին, թե որ դեպքերում է բաց թողնված դատավարական ժամկետը ենթակա վերականգնման, անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

Վերը նշված նորմի վերլուծությունից բխում է, որ դատարանը պարտավոր է բավարարել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, ինչը ենթադրում է կոնկրետ իրավիճակում ներկայացված միջնորդության ըստ էության քննություն: Հետևաբար, դատարանը յուրաքանչյուր դեպքում ունի պարտականություն քննարկման առարկա դարձնելու միջնորդության քննության համար էական նշանակու-

թյուն ունեցող յուրաքանչյուր փաստական հանգամանք և միայն վերջինիս գնահատման ու համադրման արդյունքում կայացնելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշում:

Ընդ որում, բոլոր դեպքերում բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ նախ միջնորդություն ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ օրենքով սահմանված դատավարական ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետները: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ վերը նշված գործողություններն իրականացնելը կարող է լինել աննպատակահարմար, իմաստազուրկ կամ ոչ անհրաժեշտ՝ պայմանավորված որոշակի հանգամանքներով, որպիսի «անգործությունը» չի կարող բացասական ազդեցություն ունենալ դատավարական ժամկետի բաց թողնումը հարգելի համարելու համար:

ՀՀ սահմանադրական դատարանը, Սաթենիկ Խաչատրյանի, Ռաֆայել Խաչատրյանի և Լիլիթ Թարվերդյանի դիմումի հիման վրա որոշելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի ու 391-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքում հայեցողական լիազորություն չունի: Այն բոլոր դեպքերում, երբ դատարանը պարզի, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, իրավական հետևանքը մեկն է՝ պետք է որոշում կայացվի բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին: Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած «որոշում է կայացնում» ձևակերպումը ենթադրում է դատարանի ոչ թե հայեցողությունը, այլ կոնկրետ որոշում կայացնելու պարտականությունը:

Նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև իր կողմից կայացված մի շարք որոշումներով (ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249) արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (նրա կամքից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը, դիրքորոշում է արտահայտել նաև այն մասին, որ ձևավորված այդպիսի իրավակիրառ պրակտիկայի պայմաններում բացառվում է նաև դատարանների կողմից «հարգելի պատճառի» գնահատման այնպիսի ազատությունը, ինչը կհանգեցնի բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետը հարգելի չհամարելուն (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 2021 թվականի փետրվարի 2-ին կայացված թիվ ՍԴՈ-1575 որոշումը):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու կապակցությամբ բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն քննելիս դատարանները բոլոր դեպքերում պետք է պարզեն, հետևյալ հարցերը՝

1) Երբ է կողմերի համար պարտադիր դարձել Ֆինանսական համակարգի հաշտարարի

որոշումը,

2) երբ է ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը,

3) երբ է օրինական ուժի մեջ մտել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի վերաբերյալ կայացված վերջնական դատական ակտը,

4) երբ է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն ստացել (երբ է հասանելի դարձել) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը,

5) երբ է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը ներկայացվել դատարան:

Այսինքն՝ ենթակա է պարզման նաև այն հարցը, թե Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը մերժելու մասին դատական ակտն ստանալուց (նրան հասանելի դառնալուց) հետո դիմողի կողմից ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել համապատասխան կատարողական թերթ ստանալու համար, առանց որի դատարանը չի կարող հստակ եզրահանգումներ կատարել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կապակցությամբ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ 16.06.2020 թվականին Ֆինանսական համակարգի հաշտարարը կայացրել է թիվ 15-4874/20 որոշումը՝ 300.000 ՀՀ դրամ գումարի չափով Բանկի դեմ ուղղված Անդրանիկ Քոչարյանի պահանջը բավարարելու մասին: Որոշումը կողմերի համար պարտադիր է դարձել 02.07.2020 թվականին:

10.08.2020 թվականին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Բանկի դիմումն ընդդեմ Անդրանիկ Քոչարյանի՝ Որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին: ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19.04.2021 թվականի որոշմամբ Բանկի դիմումը մերժվել է: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.09.2021 թվականին կայացված որոշմամբ (**www.datalex.am**) պաշտոնական կայքում հրապարակվել է 10.11.2021 թվականին) Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19.04.2021 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը վճռաբեկության կարգով չի բողոքարկվել, և 01.12.2021 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

Անդրանիկ Քոչարյանը 27.10.2021 թվականին, այսինքն՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված մեկ տարվա ժամկետի խախտմամբ, Դատարան է ներկայացրել վերը նշված որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում՝ միաժամանակ ներկայացնելով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն:

Դատարանը, պատճառաբանելով, որ «Դիմողն ամեն դեպքում, թեկուզև Ընկերությունը վիճարկել է Հաշտարարի որոշումը դատական կարգով, պարտավոր է եղել Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու վերաբերյալ դիմումը ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում, ինչը, սակայն, չի արել: Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ ստանալու դի-

մում ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիության վերաբերյալ միջնորդությամբ բերված փաստարկները վերաբերում են միայն 10.08.2020 թվականից մինչև 13.09.2021 թվականի ժամանակահատվածին: Մինչդեռ, Դիմողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ ստանալու դիմումը փոստին հանձնելու միջոցով դատարան է ներկայացրել միայն 29.10.2021 թվականին, սակայն միջնորդությամբ 14.09.2021 թվականից մինչև 28.10.2021 թվականը կատարողական թերթ ստանալու դիմում չներկայացնելու պատճառների հարգելիության վերաբերյալ որևէ փաստարկ չի բերել», 07.09.2022 թվականին որոշում է կայացրել Անդրանիկ Քոչարյանի միջնորդությունը՝ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի կողմից 16.06.2020 թվականին Երևան քաղաքում կայացված և 02.07.2020 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 15-4874/20 որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու համար դիմում ներկայացնելու բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, և դիմումը՝ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի կողմից 16.06.2020 թվականին կայացված և 02.07.2020 թվականին կողմերի համար պարտադիր դարձած թիվ 154874/20 որոշումը ճանաչելու ու դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու պահանջի մասին, մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը 30.11.2022 թվականին որոշում է կայացրել Անդրանիկ Քոչարյանի վերաքննիչ բողոքը մերժելու և Դատարանի 07.09.2022 թվականի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին՝ պատճառաբանելով, որ «Դիմողն ամեն դեպքում, թեկուզև Ընկերությունը վիճարկել է Հաշտարարի որոշումը դատական կարգով, պարտավոր է եղել Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու վերաբերյալ դիմումը ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում, ինչը չի արել: Բացի այդ, Հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ ստանալու դիմում ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիության վերաբերյալ միջնորդությամբ բերված փաստարկները վերաբերում են միայն 10.08.2020 թվականից մինչև 13.09.2021 թվականի ժամանակահատվածին: Մինչդեռ, Դիմողը Հաշտարարի որոշման հիման վրա կատարողական թերթ ստանալու դիմումը փոստին հանձնելու միջոցով Դատարան է դիմել միայն 29.10.2021 թվականին, սակայն միջնորդությամբ 14.09.2021 թվականից մինչև 28.10.2021 թվականը կատարողական թերթ ստանալու դիմում չներկայացնելու պատճառների հարգելիության վերաբերյալ որևէ փաստարկ չի բերել, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարում Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժման ենթակա լինելու վերաբերյալ Դատարանի եզրահանգումը: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Դատարանը սույն գործով կայացրել է իրավաչափ դատական ակտ, իսկ բողոքը չի պարունակում այնպիսի դատական սխալների մասին հիմնավորված փաստարկներ, որոնք կարող էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ և (կամ) 365-րդ հոդվածներով նախատեսված կարգով հիմք ծառայել բողոքարկված դատական ակտը բեկանելու համար, ուստի այն ենթակա չէ բավարարման»:

Վկայակոչված նորմատիվ իրավական ակտերի և վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չէին կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում կայացնելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, Ֆինանսական համակարգի հաշտարարի թիվ 15-4874/20 որոշումը կողմերի համար պարտադիր է դարձել 02.07.2020 թվականին, որից շուրջ մեկ ամիս ութ օր հետո՝ 10.08.2020 թվականին, Բանկը դիմում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այդ որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին: Նշված դիմումի վերաբերյալ վերջնական դատական ակտը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 13.09.2021 թվականին կայացված որոշումը, հրապարակվել է 10.11.2021 թվականին, իսկ օրինական ուժի մեջ է մտել 01.12.2021 թվականին: Գործում բացակայում է նշված որոշումն Անդրանիկ Քոչարյանի կողմից ստացված լինելու (նրան հասանելի դառնալու) ամսաթվի վերաբերյալ ապացույցը:

Սույն գործով դիմումը Անդրանիկ Քոչարյանը Դատարան է ներկայացրել 27.10.2021 թվականին, այսինքն՝ թեև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ կատարողական թերթ ստանալու համար դիմումը դատարան ներկայացնելու մեկ տարվա ժամկետի խախտմամբ, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերը նշված գործով որոշումը կայացվելուց հետո, բայց մինչև դրա հրապարակելը՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել դիմումը դատարան ներկայացնելու համար բաց թողնված դատավարական ժամկետը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև վկայակոչված իրավական նորմերի և հայտնված իրավական դիրքորոշումների համատեքստում դիմող Անդրանիկ Քոչարյանն ամեն դեպքում ունեցել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումն օրենքով սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականություն՝ անկախ այդ որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին դիմումի առկայությունից, սակայն ստորադաս դատարանները, իրենց հերթին, պարտավոր էին սույն գործով դիմումն օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պայմաններում բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննելիս ուշադրության արժանի համարել ոչ միայն միջնորդության մեջ նշված, այլ նաև այն բոլոր հանգամանքները, որոնք կարող էին էական նշանակություն ունենալ միջնորդությունը քննելու և լուծելու համար, ու միայն դրանց գնահատման և համադրման արդյունքում որոշում կայացնել միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին:

Տվյալ դեպքում վերը նշված միջնորդությունը քննելիս ուշադրության արժանի է այն, որ միջնորդություն ներկայացրած անձը դատարան դիմելու, դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցները ձեռնարկել է թիվ ԼԴ2/1535/02/20 քաղաքացիական գործով որոշումը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացվելուց հետո՝ անգամ չսպասելով ոչ դրա հրապարակմանը, ոչ էլ դրա օրինական ուժի մեջ մտնելուն, որպիսի «անգործությունը» պայմանավորել է նրանով, որ այդ դատավարական գործողությունները սահմանված ժամկետում կատարելը եղել է աննպատակահարմար և իմաստազուրկ, քանի որ սույն գործով դիմումն ավելի վաղ ներկայացվելու պայմաններում Դատարանը, պարզելով, որ մեկ այլ դատարանի վարույթում առկա է Ֆինանսական համակարգի հաշտարարի նույն որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասով, որոշում կկայացնեն սույն գործով դիմումն առանց քննության թողնելու մասին:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Անդրանիկ Քոչարյանը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որի իրավական հետևանքը մեկն է՝ պետք է որոշում կայացվի բաց թողնված դատավարական ժամկե-

տը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքի հիմքը, որպիսի հանգամանքից ելնելով՝ նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության դեպքում վերը նշված իրավական նորմերն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Ընդ որում, գործի նոր քննության ժամանակ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ինչպես սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, այնպես էլ Վճռաբեկ դատարանի եզրահանգումները, որից հետո կայացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 345-րդ հոդվածում նշված որոշումներից որևէ մեկը՝ պահպանելով նույն օրենսգրքի համապատասխան կանոնները:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հատուկ վարույթներով, ինչպես նաև նույն օրենսգրքի 44-52-րդ գլուխներով նախատեսված դիմումների քննության հետ կապված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է դիմողների վրա:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.11.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՎԴ/2643/05/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2023 թվականի սեպտեմբերի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Լուսինե Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անվամբ 22.12.2021 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Լուսինե Սարգսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անվամբ 22.12.2021 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Միաժամանակ միջնորդել է կասեցնել Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անվամբ 22.12.2021 թվականի կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (վարչական ակտը):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 04.05.2022 թվականի որոշմամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.08.2022 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Լուսինե Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.05.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառա-

վարիչ Լուսինե Սարգսյանը (ներկայացուցիչ՝ Լուսինե Գրիգորյան):
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» 6-րդ հոդվածը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ և 10-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը:

Բողոքաբերը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Իրավունքի պետական գրանցման վարչական ակտի կասեցումը ոչ թե գրանցման՝ որպես ուղղակի գործողության կասեցումն է, ինչպես նշել է սույն գործով Վերաքննիչ դատարանը՝ պատճառաբանելով, որ գրանցումը դեռևս 22.12.2021 թվականին իրականացված և ավարտված է, այլ գրանցման՝ որպես վարչական ակտի կասեցումն է, որն իրենից ենթադրում է վարչական ակտից բխող բոլոր գործողությունների «սառեցումը, կասեցումը»:

Վերագրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և բավարարել վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնելու առանձնահատկությանը:

Արդար դատաքննության իրավունքը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է որպես յուրաքանչյուրի՝ իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Սահմանադրական այս դրույթից ակնհայտ է, որ արդար դատաքննության իրավունքը չի սահմանափակվում դատարան դիմելու իրավունքի պարզ ամրագրմամբ: ՀՀ Սահմանադրությունը նաև պարտավորեցնում է բավարարել դատական պաշտպանության միջոցի արդյունավետության իմպերատիվ պահանջը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում հայտնել է դիրքորոշում առ այն, որ դատական պաշտպանության իրավունքը կլինել անիրական, իսկ դատական պաշտպանության ընթացակարգը՝ անարդյունավետ, եթե ներպետական օրենսդրությու-

նր թույլ տար վերջնական և պարտադիր բնույթ ունեցող դատական ակտերին մնալ չկատարված՝ ի վնաս մի կողմի: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ եթե պետությունը չի երաշխավորում վերջնական դատական ակտերի ի կատար ածումը, դա հանգեցնում է այնպիսի իրողության, որն անհամատեղելի է իրավունքի գերակայության սկզբունքի հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան երաշխավորելիս: Մեկնաբանելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել, որ արդար դատաքննության իրավունքը ներառում է ոչ միայն վեճն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու, այլ նաև կայացված դատական ակտը կատարելուն ուղղված գործուն և արդյունավետ կառուցակարգեր կիրառելու անհրաժեշտություն (*տես Խաչատրյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.03.2010թ. վճիռը, կետ 66, Բուրդոֆն ընդդեմ Ռուսաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 07.05.2002թ. վճիռը, կետ 34, Հորնսթին ընդդեմ Հունաստանի 19.03.1997թ. վճիռը, կետ 40*):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր 13.09.1989 թվականի «Վարչական գործերով ժամանակավոր դատական պաշտպանության վերաբերյալ» թիվ (89) 8 հանձնարարականով արձանագրել է, որ դատարանների կողմից կիրառվող ժամանակավոր պաշտպանության միջոցները կարող են լինել վարչական ակտի կատարումը ամբողջությամբ կամ մասնակի կասեցնելու, վարչական ակտի ընդունման պահին կամ հետագա ցանկացած ժամանակ եղած դրությունը ամբողջությամբ կամ մասնակի վերականգնելու և վարչակազմի վրա դատարանի լիազորություններից բխող ցանկացած պարտականություն դնելու միջոցով: Նույն հանձնարարականով նշվել է, որ եթե վարչական ակտը վիճարկվում է դատարանում և դատարանը դեռևս չի հրապարակել իր որոշումը, հայցվորը կարող է դիմել նույն կամ նման իրավասություն ունեցող այլ դատարան՝ վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կիրառելու համար: Վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կիրառելու խնդրանքով դատարան դիմելու իրավունք ունեն նաև շահագրգիռ անձինք: Նույն հանձնարարականով նաև նշվել է, որ վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կարող են կիրառվել մասնավորապես, երբ վարչական ակտի կատարումը կարող է ծանր վնաս հասցնել, որը վերականգնելը մեծ ջանքեր կպահանջի, և եթե *prima-facie* առկա են վարչական ակտի առոչնչության վերաբերյալ ապացույցներ:

Իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովելու գործուն կառուցակարգերից են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ամրագրված հայցի ապահովման և վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով հայցի ապահովման միջոցի կիրառման հիմքերը, միաժամանակ այս ինստիտուտի կիրառումը հնարավոր է համարել միայն պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցերի առնչությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը վիճարկման հայցերի առնչությամբ սահմանել է հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության մեկ այլ եղանակ՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մի կողմից՝ վիճարկման հայցի, մյուս կողմից՝

մյուս հայցատեսակների առնչությամբ հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության եղանակների ընտրության հարցում օրենսդրի տարբերակված մոտեցումն իր հիմքում ունի օբյեկտիվ չափանիշ. նման տարբերակված մոտեցումը պայմանավորված է նրանով, որ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը, որպես կանոն, իրենց բնույթով ինքնակատարվող դատական ակտեր են, և Օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության եղանակը, ելնելով նշված իրողությունից, նպատակ է հետապնդում ապահովել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը՝ դատական պաշտպանությունը չդարձնելով ինքնանպատակ:

ՀՀ սահմանադրական դատարանը, 29.12.2020 թվականի թիվ ՍԴԱՈ-248 որոշմամբ արձանագրել է, որ վիճարկման հայցի պարագայում օրենսդիրը չի նախատեսել հայցի ապահովման միջոց կիրառելու հնարավորություն, սակայն սահմանել է հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության մեկ այլ եղանակ: Մասնավորապես, վիճարկման հայցի դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է օրենքի ուժով՝ վիճարկման հայցով հայցադիմումը վարույթ ընդունելն ինքնին հիմք է հանդիսանում տվյալ վարչական ակտի կատարումը կասեցնելու համար (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառություններով): Նշված կարգավորման տրամաբանությունը, ի թիվս այլնի, կայանում է նրանում, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելով վիճարկվող վարչական ակտը պարզապես կորցնում է իր իրավաբանական ուժը: Այլ կերպ ասած՝ նշված տեսակի հայցի բավարարման դեպքում կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը, որպես այդպիսին, պայմանական բնույթ է կրում, քանի որ այն չի ենթադրում միջնորդավորված որևէ գործողություն և, այդպիսով, չի առաջացնում կատարման հետ կապված այնպիսի դժվարություններ, որոնք բնորոշ են դատական իմաստով կատարում ենթադրող դատական ակտերին: Վերոգրյալը հաշվի առնելով՝ վիճարկման հայցի պարագայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը նախատեսել է ոչ թե հայցի ապահովման միջոցի, այլ՝ նախնական իրավական պաշտպանության կիրառման հնարավորություն՝ այն է վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում, դրանով իսկ որոշակի իրավական երաշխիքներ տրամադրելով հայցվորին՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ենթատեքստում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնին համապատասխան՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է վիճարկման հայցը վարույթ ընդունելու փաստի ուժով: Միաժամանակ, նշված ընդհանուր կանոնից նույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով սահմանված են բացառություններ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում

է դատարանի որոշմամբ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքերը, այն է՝ վիճարկվող վարչական ակտը կասեցնելու մասին միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքերին, նշել է, որ օրենսդիրը վարչական ակտի կատարումը կասեցնելու դատարանի լիազորության կիրառման համար սահմանել է երկու վավերապայման, որոնցից առնվազն մեկի առկայությունը պարտադիր է վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Այսինքն, վարչական ակտի կատարումը կասեցվում է, եթե

- առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, կամ

- անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

(...) Ընդ որում, վերոնշյալ հիմքերից որևէ մեկի հնարավոր առկայությունը բավարար հիմք է դատարանի կողմից վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին որոշում ընդունելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտականությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապակցված հարցեր: Առաջին՝ առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, և երկրորդ՝ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես՝ «վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրավիճակի, երբ տվյալ գործով հայցի առարկայի շրջանակներում մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվոր կողմի համար կստեղծի այնպիսի բացասական (վնաս պատճառող) հետևանքներ, որոնք նյութական իմաստով անհամեմատ կծանրացնեն հայցվորի վիճակը: Իսկ «վարչական ակտի կատարումն անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների պաշտպանությունը» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրողության, երբ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարման պայմաններում այլևս անհնարին կարող է դառնալ հայցվորի իրավունքի (իրավունքների) պաշտպանությունը: Այս դեպքում, «անհնարին» եզրույթը վերաբերում է բացառապես տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությանը, ոչ թե հայցվորի իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես: Այսինքն, դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը չբավարարելը և գործի քննության արդյունքում նույն վարչական ակտն անվավեր ճանաչելը միանշանակորեն չի հանգեցնում հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարինության:

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ օրենսդիրը նախատեսել է հիմնավոր կասկածի ենթադրությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորություն, եթե այն հայցվորին զգալի վնաս կհասցնի, կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «հիմնավոր կասկած» եզրույթի բացահայտմանը, եզրահանգել է, որ «հիմնավոր կասկած» եզրույթի օգտագործումն ինքնանպատակ չէ, և

այն պետք է հաղթահարված համարել ոչ միայն այն դեպքերում, երբ միջնորդությամբ ներկայացված փաստական տվյալներով միանշանակ հիմնավորվում է անձին զգալի վնաս պատճառելու կամ անձի իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հանգամանքը, այլև այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցների կողմից ներկայացված փաստական տվյալներով ողջամիտ կասկած է ձևավորվում վիճարկվող ակտի կատարման պարագայում անձին զգալի վնաս պատճառելու կամ անձի իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հանգամանքի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ «հիմնավոր կասկած» եզրույթը ենթակա է մեկնաբանման կոնկրետ գործողության հնարավոր վրա հասնելու և իրավական հետևանք առաջացնելու առումով: Ընդ որում, «կասկած» եզրույթի օգտագործումն արդեն իսկ նշանակում է, որ խոսքը չի գնում ապացույցներով հաստատվելիք փաստի մասին:

(...) Կասկածի ողջամտությունը չի կարող լինել վերացական կամ հայեցողական, այլ պետք է գնահատվի գործի հանգամանքների համատեքստում: Փաստի վերաբերյալ կասկածը ողջամիտ է, եթե հաստատված այլ հանգամանքները հնարավորություն չեն տալիս հետևության հանգել այդ փաստի՝ սովորականից բարձր հավանականության մասին, կամ հակառակ փաստը նույնքան ողջամիտ և հավանական է: Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ ի հայտ է գալիս «կասկած», այն պետք է լինի ողջամիտ, այսինքն՝ պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված (*տես, Սոֆիա Խաչատրյանը և Սիրվարդ Խաչատրյանն ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկվող ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս հայցվորից պահանջվում է ներկայացնել փաստեր և փաստարկներ վիճարկվող վարչական ակտի կատարմամբ պատճառվելիք զգալի վնասի կամ դատական պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ, իսկ դատարանի պարտականությունն է նշված միջնորդության քննարկման շրջանակներում գնահատել այդ հիմնավոր կասկածի առկայության/բացակայության հարցը:

Անդրադառնալով «վարչական ակտի կատարման կասեցում» հասկացության բովանդակությանը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում այդ հասկացության բովանդակությունը բացահայտել կասեցմամբ հետապնդվող իրավական նպատակի համատեքստում, այն է՝ նախնական պաշտպանության միջոցի կիրառմամբ ապահովել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը՝ հայցվորի դատական պաշտպանությունը չդարձնելով ինքնանպատակ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի կատարման կասեցումը ենթադրում է կասեցման ժամանակահատվածում դրա գործողության ժամանակավոր դադարեցում, որպիսի պայմաններում այդ ժամանակահատվածում տվյալ վարչական ակտն իրավական հետևանքներ առաջացնել չի կարող, և ըստ այդմ՝ բացառվում է հայցվորին այդ ակտի գործողության արդյունքում վնաս պատճառելու և (կամ) դատական պաշտպանությունն անհնարին դարձնելու հավանականությունը: Վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը ենթադրում է այնպիսի գործողություններ կատարելու արգելք, որոնք կատարելու իրավազորությունը բխում է տվյալ վարչական ակտից: Ընդ որում, այդ արգելքները կարող են վերաբերել ինչպես վարչական ակտի հասցեատիրոջը, այնպես էլ իրավասու վարչական

մարմիններին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում «վարչական ակտի կատարման կասեցում» հասկացության բովանդակությունը պայմանավորված է, ի թիվս այլնի, նրանով, թե ինչ գործի կարգավորման նպատակով է տվյալ վարչական ակտն ընդունված: Այլ կերպ՝ այն սահմանափակումները և (կամ) արգելքները, որոնք բխում են տվյալ կոնկրետ վարչական ակտի կատարումը կասեցնելուց, սերտորեն կապված են դրա բնույթի և կարգավորման առարկայի հետ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիմնական հասկացությունները սահմանող 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական գրանցումը նույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ է, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «պետական գրանցումն ընդգրկում է՝

1) գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների գրավի ծագման, դադարման, փոխանցման, փոփոխման պետական գրանցումը.

2) գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավագործությունների նկատմամբ սահմանափակումների, ինչպես նաև գույքային իրավունքների իրականացման սահմանափակումների կիրառման, փոփոխման, դադարման պետական գրանցումը»:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները համարվում են գրանցված գրանցման մատյանում սահմանված գրառումները կատարելու և պետական գրանցման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից հաստատվելու պահից: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավունքի պետական գրանցումից հետո գրանցված իրավունքի սուբյեկտներին տրամադրվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական, որը հաստատում է գրանցման ներկայացված իրավունքի պետական գրանցման իրականացման փաստը:

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից բխում է, որ իրավունքի պետական գրանցումը, օժտված լինելով վարչական ակտին բնորոշ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատկանիշներով, վարչական ակտ է, ուժի մեջ է մտնում գրանցման մատյանում սահմանված գրառումները կատարելու և պետական գրանցման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից հաստատվելու պահից, որպիսի փաստը հաստատվում է իրավունքի պետական գրանցման վկայականով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը որպես պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: Բացի գործարքից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ գլխի դրույթները

որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հիմք են ճանաչում, ի թիվս այլնի, նաև անձի կողմից իր համար նոր անշարժ գույքի ստեղծումը («Քաղաքացիական օրենսգրքի 173-րդ հոդված»), ձեռքբերման վաղեմությունը («Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդված»): «Քաղաքացիական օրենսգրքի 173-րդ և 187-րդ հոդվածները համապատասխանաբար նշված հիմքերով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագումը ևս պայմանավորում են այդ իրավունքի պետական գրանցման պահով»:

Հիմք ընդունելով նշված իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի պետական գրանցումը վարչական ակտ է, որի հիմքով ծագում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:

«Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքը նույն հոդվածի 1-ին մասով սահմանված այն բացառությունների շրջանակում է, երբ դատարանի հայեցողությանն է թողնված նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքի (հիմքերի) առկայության պայմաններում վարչական ակտի կատարումը կասեցնելը: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված բացառությունն է այն դեպքը, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):

Հաշվի առնելով, որ իրավունքի պետական գրանցումը վիճարկելու դեպքում գրանցման՝ որպես վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձը վիճարկում է իրավունքի պետական գրանցման հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- օրենսդիրը նախատեսել է իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնելու իրավական հնարավորություն,

- դատարանը կարող է իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնել Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքի/հիմքերի առկայության դեպքում:

Ըստ այդմ՝ հայցվորից պահանջվում է իրավունքի պետական գրանցման կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությամբ ներկայացնել փաստեր և փաստարկներ վիճարկվող իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարմամբ պատճառվելիք զգալի վնասի կամ դատական պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ, իսկ դատարանի պարտականությունն է նշված միջնորդության քննարկման շրջանակներում գնահատել այդ հիմնավոր կասկածի առկայության/բացակայության հարցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի պետական գրանցումը վիճարկելու վերաբերյալ հայցադիմումին կից ներկայացնելով միջնորդություն վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ և դրանով ներկայացնելով զգալի վնասի և/կամ իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի վերաբերյալ փաստարկներ՝ հայցվորը հայցում է ոչ թե իրավունքի պետական գրանցման կասեցում, այլ իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարման կասեցում: «Իրավունքի պետական գրանցման վարույթի կասեցում» և «իրավունքի պետական գրանցման կատարման կասեցում» հասկացություններն էապես տարբերվում են. առաջին դեպքում խոսքը վերաբերում է մինչև վարչական ակտի ընդունումը տեղի ունեցող գործընթացի, երկրորդ դեպքում՝ վարչական ակտի ընդունումից և ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցող գործընթացի:

Հաշվի առնելով իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի առանձ-

նահատկությունը և ելնելով վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտի՝ արդյունավետ դատական պաշտպանություն ապահովելու նպատակից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարման կասեցումը ենթադրում է վիճարկվող վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այնպիսի գործարքներ կնքելու արգելք, որոնք կնքելու իրավազորությամբ գրանցված իրավունքի իրավատերն օժտվում է տվյալ իրավունքի պետական գրանցման՝ վարչական ակտի ընդունման ուժով: Իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարման կասեցումը ենթադրում է նաև այդ գործարքները վավերացնելու, դրանց հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարելու՝ իրավասու մարմիններին ուղղված արգելք:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Լուսինե Սարգսյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել վիճարկման հայց՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անվամբ 22.12.2021 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Հայցադիմումին կից ներկայացվել է «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդություն» վերտառությամբ փաստաթուղթ, որով հայցվորը խնդրել է «կասեցնել Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անվամբ 22.12.2021 թվականի կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը/վարչական ակտը/»: Նշված միջնորդությունը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով, վկայակոչվել են այս նորմի մեկնաբանության և կիրառման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով 25.06.2021 թվականի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները: Ի հիմնավորումն վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդության՝ հայցվորը փաստարկել է, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ սույն գործի դատական քննության ընթացքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից ք. Երևան, Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող անշարժ գույքի օտարումն անհնարին կդարձնի սնանկ ճանաչված հայցվորի իրավունքների պաշտպանությունը: Ըստ հայցվորի՝ «այս պնդումը ոչ թե ուղղակի ենթադրություն է, այլ ողջամիտ, հիմնավոր կասկած, քանի որ բանկի հիմնական նպատակը դրամաշրջանառության ապահովումն է, և իրավակիրառ պրակտիկայում բոլոր բանկերը հիմնականում օտարում են իրենց անվամբ սեփականության իրավունքով գրանցված գույքերը» (**հավելված 1, գ.թ. 15-17**):

Դատարանը 04.05.2022 թվականին կայացրել է «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշում: Քննարկելով հայցվորի՝ «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը»՝ Դատարանը 04.05.2022 թվականի որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով որոշել է. «Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին, մերժել»: Դատարանը վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդության մերժումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) դեռևս 22.12.2021 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 125/1 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի սեփականության իրավունքը: Այսինքն, սեփականության իրավունքի պետական գրանցման գործողությունը իրականացված և ավարտված է, ուստի Դատարանի գնահատմամբ միջնորդությունը ենթակա է մերժման»:

Վերաքննիչ դատարանը 29.08.2022 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Լուսինե Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ անհիմն համարելով բողոքաբերի փաստարկն առ այն, որ ներկայացված միջնորդությամբ ոչ թե խնդրել է կասեց-

նել պետական գրանցումը որպես գործողություն, այլ խնդրել է կասեցնել պետական գրանցումը՝ որպես վարչական ակտ, «քանի որ սեփականության իրավունքի պետական գրանցման գործողությունն արդեն իսկ կատարված է, այսինքն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքն արդեն իսկ գրանցված է և այդ գրանցումը՝ որպես վարչական ակտ կասեցնելու իրավակարգավորում, օրենսդիրը չի նախատեսել»:

Վերը շարադրված դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Դատարանի կողմից՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, ըստ էության, այն հիմնավորմամբ, որ իրավունքի պետական գրանցումը՝ որպես գործողություն, արդեն կատարված և ավարտված է: Այսինքն՝ հայցվորի միջնորդությունը Դատարանի կողմից ընկալվել է որպես իրավունքի պետական գրանցման գործընթացը կասեցնելու, այլ ոչ թե իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն, և նման ընկալման պայմաններում միջնորդության փաստարկներն ըստ էության քննարկման առարկա չեն դարձվել: Մինչդեռ, հայցվորի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» միջնորդության բովանդակությունից ակնհայտորեն բխում է, որ ներկայացվել է ոչ թե խնդրո առարկա իրավունքի պետական գրանցման գործընթացը կասեցնելու, այլ իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն: Մասնավորապես, հայցվորն իր միջնորդությունը վերնագրել է «Վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն», որպես միջնորդության իրավական հիմք նշել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը, վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նշված նորմի մեկնաբանության ու կիրառման վերաբերյալ համապատասխան իրավական դիրքորոշումներ, ներկայացրած փաստարկներով փորձել է հիմնավորել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքերից մեկի՝ հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը:

Ըստ այդմ՝ Դատարանի կողմից միջնորդության քննության շրջանակներում քննարկման առարկա պետք է դարձվեր նման հիմնավոր կասկածի առկայության/բացակայության հարցը: Մինչդեռ, նշված հարցը Դատարանի կողմից բովանդակային քննարկման առարկա չի դարձվել, գնահատական չի տրվել:

Վճռաբեկ դատարանը վերաքննիչ բողոքի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ հայցվորը վերաքննիչ բողոքում, մասնավորապես, փաստարկել է, որ «Դատարանը սխալ է ըմբռնել ներկայացված միջնորդությունը, քանի որ հայցվորը ներկայացված միջնորդությամբ ոչ թե խնդրել է կասեցնել պետական գրանցումը՝ որպես գործողություն, այլ խնդրել է կասեցնել պետական գրանցումը՝ որպես վարչական ակտ, այլ կերպ՝ գրանցման ակտը, քանի որ գրանցումը որպես գործողություն արդեն իսկ կատարված է և հենց այդ հիմքով էլ ներկայացվել է վիճարկման հայց»:

Վերաքննիչ դատարանը, սակայն, նշված փաստարկն անհիմն է համարել՝ վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները, հայցվորի՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ խնդրանքը սխալմամբ դիտարկելով որպես իրավունքի պետական գրանցման գործընթացը կասեցնելու վերաբերյալ խնդրանք, ըստ էության քննարկման առարկա չեն դարձրել հայցվորի՝ իր իրավունքների

պաշտպանության անհնարինության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին փաստարկները: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ այդ նորմի հիմքով ներկայացված միջնորդության ըստ էության քննարկումը ենթադրում է նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքերից որևէ մեկի առկայությունը/բացակայությունը պարզելու և գնահատելու դատարանի պարտականություն:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի 04.05.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումը, կայացրել է ոչ իրավաչափ դատական ակտ, ուստի այն ենթակա է վերացման:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի և Վերաքննիչ դատարանի որոշումները վերացնելու պայմաններում հայցվորի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» միջնորդությունը պետք է ըստ էության քննարկման առարկա դառնա ՀՀ վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքի առկայության/բացակայության հարցը ստորադաս դատարանների կողմից ըստ էության քննարկման առարկա չի դարձվել: Այս հանգամանքի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը չի կարող ըստ էության գնահատական տալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու հիմքի առկայության/բացակայության հանգամանքին, քանի դեռ այդ հարցն ըստ էության քննարկման առարկա չի դարձվել ստորադաս դատարանների կողմից: Ըստ այդմ՝ բողոքաբերի պահանջը՝ իրավունքի պետական գրանցման՝ որպես վարչական ակտի կատարումը կասեցնելու մասով, բավարարման ենթակա չէ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 04.05.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ԲԱՐԵՄԱԴԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ
Համլետ ԱՍԱՏՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Դավիթ ՍԵՐՈԲՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Գայանե ՄԱՋՄԱՆՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր
իրավասության դատարանի դատավոր
Մանուկ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի
քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավոր
Լիզա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Ռուբիկ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Մարինե ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ
Սերոբ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Նաիրա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Սասուն ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Լուսինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Սարգիս ԵՐԻՑՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Սուսաննա ԳՂՈԳՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Սիմա ԱՐՈՎՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Էդգար ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի դատավոր
Հայարփի ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
քրեական դատարանի դատավոր
Վահե ՄԻՍԱԿՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր
Հրաչյա ՄԵԽԱԿՅԱՆԻ ծննդյան 35-ամյակը,

*մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ
և մասնագիտական արդյունավետ գործունեություն:*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:

Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:

Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:

«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.

1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով, այն պետք է ունենա մյուս երկու լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-ից 250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը պետք է ունենա նաև երեք լեզվով մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):

Պարբերականում նյութերը տպագրվում են անվճար հիմունքներով: